

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Ձեկույցը պատրաստվել և հրատարակվել է «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան»-ի ֆինանսական աջակցությամբ:



Ձեկույցը պատրաստվել և հրատարակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Հաշվետվության հեղինակներ՝

Ավետիք Իշխանյան

Արման Դանիելյան

Արթուր Սաքունց

Թեմիկ Խալափյան

Միքայել Արամյան

Միքայել Բաղդասարյան

Ռուբեն Աղուզումցյան

Բովանդակություն

Ներածություն.....	4
Ընդհանուր տեղեկություններ կալանավորվածներին պահելու վայրերի մասին	6
«Երևան կենտրոն» քրեակատարողական հիմնարկ	8
«Գորիս» քրեակատարողական հիմնարկ	10
«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ	13
«Արովյան» քրեակատարողական հիմնարկ	15
«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ.....	17
«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ.....	18
«Գյումրի» քրեակատարողական հիմնարկ	18
Մնունդ.....	19
Բուժսպասարկում	21
Հոգեբանական խնդիրները քրեակատարողական հիմնարկներում.....	23
Զբոսանք	29
Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելում.....	30
ՔԿՀ-ների անձնակազմը և նրանց խնդիրները.....	35

Ներածություն

2001թ. հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունը դառնալով Եվրոպայի Խորհրդի լիիրավ անդամ, այլ պարտավորությունների շարքում ստանձնեց նաև բարեփոխումներ կատարել ազատագրված վայրերում: Մասնավորապես պարտավորությունների գ. կետում նշված է՝ *Անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օրենք՝ Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարություններից բանտային համակարգի, այդ թվում նաև նախնական կալանքի վայրերի և աշխատանքային գաղութների նկատմամբ պարտականությունները (իրավասությունները) Արդարադատության նախարարությանը փոխանցելու մասին՝ դրանով ապահովելով համակարգի հանգամանալի բարեփոխումները և ապառազմականացումը, և երաշխավորել նշված օրենքի արդյունավետ կիրառումը այն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ նախնական կալանքի վայրերի և աշխատանքային գաղութների արդյունավետ փոխանցման, ինչը պետք է կատարվի նշված օրենքի ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում:*

Քրեակատարողական համակարգի և քրեակատարողական օրենսդրության բարեփոխման պարտավորությունը անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթներին: Կալանավայրերի համակարգը, ներառյալ նախաքննչական մեկուսարանները, Ներքին գործերի նաև Ազգային անվտանգության նախարարությունների ենթակայությունից Արդարադատության նախարարության ենթակայությանը փոխանցելու գործընթացն ավարտվել է 2003-ի հունվարին: Ընդունվել են քրեակատարողական համակարգի բարելավման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր («Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքը (6.02.02թ.),

Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքը (15.12.03) և այլն): 2004թ. նոյեմբերի 10-ին ՀՀ Ազգային ժողովը 2-րդ ընթերցմամբ ընդունել է դատապարտյալներին պահելու կարգին վերաբերող ՀՀ Քրեակատարողական օրենսգիրքը:

Ազատագրված վայրերը Արդարադատության նախարարությանը փոխանցվելուց հետո թափանցիկ դարձան հասարակության համար, մի շարք հասարակական կազմակերպություններ դիտարկումներ անցկացրեցին քրեակատարողական հիմնարկներում:

Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է հասարակական դիտորդական խմբի ձևավորումն Արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից: 2004թ. մայիսի 14-ին ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը վկայագրեր է հանձնել ՀՀ Ան քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրի հասարակական դիտորդների 11 անձից բաղկացած խմբի անդամներին: Խմբում ընդգրկվել են մի շարք հասարակական, այդ թվում իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ, խմբի կազմում է նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչը:

Խումբը ստեղծվել է Արդարադատության նախարարի հրամանով՝ «Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի» դրույթների համաձայն: Մասնավորապես, ըստ փաստաթղթերի, խումբն ամրագրվում է որպես կալանավորվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին: Կարգի համաձայն խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ, ծանոթանալ տարաբնույթ

փաստաթղթերի բովանդակությանը (նաև կալանավորված անձի համաձայնությամբ նրա անձնական գործերին եւ գրագրությանը, բացի գաղտնի փաստաթղթերից), հիմնարկի իրավիճակին, ինչպես նաև հանդիպել կալանավորված անձանց: Խմբի անդամներն ընդգրկվում են 3 տարի ժամկետով:

Հասարակական դիտորդների խմբի անդամները 2004թ. Հունիս-2005թ. փետրվար ամիսներին ԵԱՀԿ, PRI (Ռատական Ռեֆորմների Միջազգային կազմակերպություն), ազմակերպությունների աջակցությամբ մասնակցել են հատուկ դասընթացների ազատագրկման վայրերում մոնիտորինգ անցկացնելու հմտություններին տիրապետելու նպատակով: Խմբի այցելությունները քրեակատարողական հիմնարկներ սկսվել են 2004թ. հունիսից, 2004թ. հունիս-փետրվար ամիսներին տեղի ունեցած այցելությունների արդյունքները ամփոփված են 2005թ. խմբի առաջին հաշվետվություն-տեղեկանքի մեջ: Իր գործունեության ընթացքում խումբը ընդունել է ներքին էթիկայի կանոններ (հավելված):

2005թ. ընթացքում խումբը կատարել է պլանային եւ ոչ պլանային այցելություններ ահազանգերի եւ մամուլի հրապարակումների հիման վրա:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված են խմբի այցելած քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց պահելու պայմանները, նրանց նկատմամբ համակարգի աշխատակիցների վերաբերմունքը: Հաշվետվությունը կազմելիս խումբը համեմատական վերլուծություն է կատարել 2005թ. Ընթացքում իր ստացած տվյալների, խմբի 2004թ. հաշվերվության, ինչպես նաև մինչ այդ այլ ՀԿ-ների (Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Ժողովրդավարական բարեփոխումների ազգային լիգա, Հայաստանի Հելսինկյան կոմիտե) կողմից կատարված մոնիտորինգների միջև, դրանք համադրելով միջազգային չափանիշների հետ:

Խումբը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԱՆ ՔԿ վարչությանը եւ քրեակատարողական հիմնարկների ղեկավար

ությունը խմբի աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու համար: Խումբը շնորհակալություն է հայտնում նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին, Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղին եւ տարածաշրջանային PRI գրասենյակին խմբին մասնագիտական, տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Ընդհանուր տեղեկություններ կալանավորվածներին պահելու վայրերի մասին

Հայաստանում կալանավորվածներին պահելու վայրերը յոթն են. «Նուբարաշեն», «Վանաձոր», «Գորիս», «Գյումրի», «Աբովյան», «Վարդաշեն» եւ «Երեւան կենտրոն» քրեակատարողական հիմնարկները:

«Նուբարաշեն», «Վարդաշեն», «Աբովյան» եւ «Գորիս» քրեակատարողական հիմնարկները օգտագործվում են ինչպես կալանավորվածներին, այնպես էլ դատապարտյալներին պահելու համար:

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների համար: Այն բաղկացած է վարչական եւ ազատագրկվածներին պահելու համար նախատեսված մասնաշենքերից: Ընդ որում ազատագրկվածներին պահելու համար նախատեսված մասնաշենքը բաղկացած է 2 գոտիներից՝ կալանավորների և դատապարտյալների:

2003-2005թթ. հիմնարկը հիմնովին վերանորոգվել է: Ներկայումս Հայաստանում գործող քրեակատարողական հիմնարկներից այստեղ ազատագրկվածներին պահելու պայմանները առավել մոտ են միջազգային չափանիշներին:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է կանանց եւ անչափահասներին պահելու համար: Այն բաղկացած է երեք գոտիներից՝ դատապարտյալ կանանց, դատապարտյալ անչափահասների եւ կալանավորվածների (կանանց եւ անչափահասների) համար: ԿՊՎ-ի նույն մասնաշենքում, նույն հարկերում, սակայն միմյանցից անջատ տարբեր խցերում պահվում են կանայք եւ անչափահասները: Հիմնարկի շենքը կառուցվել է 1958-ին:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում առանձին հարկ է տրամադրված ցմահ դատապարտյալներին պահելու համար: Այդ հարկի խցերը վերանորոգված են: Մյուս դատապարտյալ-

ները և կալանավորվածները պահվում են նույն հարկում, սակայն տարբեր խցերում: Այդ խցերը գտնվում են ծայրաստիճան անմխիթար վիճակում:

Հիմնարկի շենքը կառուցվել է 19-րդ դարի առաջին կեսին եւ գործել է որպես գորանոց, 1870-ից՝ որպես բանտ: Վերջին անգամ շենքը վերանորոգվել է 1987-ին, սակայն մասնակի վերանորոգման աշխատանքներ պարբերաբար տարվել են: Հարկ է նշել, որ հիմնարկի շենքը գտնվում է անմիջապես բնակելի շենքերի հարեւանությամբ:

«Գյումրի» քրեակատարողական հիմնարկը կառուցվել է 1928-ին եւ գործել է որպես ախոռ: Տեղանքը, ուր կառուցված է հիմնարկի շենքը, հարուստ է ստորգետնյա ջրերով, ինչի պատճառով այստեղ կատարվող վերանորոգման աշխատանքները անարդյունավետ են:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը Հայաստանի կենտրոնական ԿՊՎ-ն է: Հիմնարկը կատարում է ինչպես ԿՊՎ-ի, այնպես էլ բաշխիչ հիմնարկի դեր: Բացի այդ, այստեղ է պահվում ցմահ դատապարտյալների մեծ մասը: Հիմնարկի շենքը կառուցվել է 1980-ին: Շենքը օդակաձեւ է, որի պատճառով հարկի հսկիչը հնարավորություն չունի մեկ կետից տեսադաշտում պահել հարկի բոլոր խցերի դռները: Սահող հողերի պատճառով շենքի հիմքը վտանգված է: Կալանավորվածների համար նախատեսված են մեկ օդակաձեւ վեց հարկանի շենք եւ մեկ երկհարկանի կից շինություն: Հինգերորդ հարկում պահվում են ցմահ դատապարտյալները, իսկ վեցերորդ հարկում գտնվում են զբոսահրապարակները: Կից մասնաշենքի առաջին հարկը տնտեսմասն է, այստեղ պահվում են հիմնարկում աշխատող դատապարտյալները, նույն մասնաշենքի երկրորդ հարկում՝ կալանավորվածները: Հիմնարկում կատարված վերանորոգման աշխատանքների շնորհիվ խցերում զուգարանները

մեկուսացվել են: Հիմնարկն ունի արահազ եւ հացի փուռ:

«Երեւան-կենտրոն» հիմնարկը նախկինում Ազգային անվտանգության նախարարության մեկուսարանն է եղել: Շենքը կառուցվել է 20-րդ դարի 40-ական թվականներին:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի շենքը կառուցվել է 19-րդ դարում եւ նախատեսված է եղել որպէս ախոռ օգտագործելու համար: Շենքը ծայրաստիճան վատ վիճակում է, քանի որ կառուցված է ստրգետնյա ջրառատ տեղայնքում: Պարբերաբար կատարվող կոսմետիկ վերանորոգումները խոնավության պատճառով ապարդյուն են: Ներկայումս հիմնարկի համար նոր շենք է նախատեսված, ընթանում են շինարարական աշխատանքներ:

Չնայած ընթացիկ վերանորոգման աշխատանքների, բոլոր հիմնարկները, բացի «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից, կապիտալ վերանորոգման, վերակառուցման կամ տեղափոխման կարիք ունեն:

«Գորիս», «Գյումրի», «Վանաձոր» եւ «Երեւան կենտրոն» հիմնարկները գտնվում են բնակավայրերում՝ բնակելի շենքերի անմիջական հարևանությամբ:

Ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիարկների տեսակները, լրակազմերը եւ դրանց ըստ տեսակների դասակարգումը:

	Գորիս	Աբովյան	Նուբարաշեն	Վարդաշեն	Վանաձոր	Երևան կենտրոն	Գյումրի
Փակ ուղղիչ հիմնարկ	61	15	108	15	10	10	14
Այդ թվում կալանք պատժատեսակ կրող դատապարտյալների համար	10	10	32	10	10		10
Կիսափակ ուղղիչ հիմնարկ	30	40	12	20			
Կիսաբաց ուղղիչ հիմնարկ	13	81	47	64	13	5	13
Բաց ուղղիչ հիմնարկ	5	50	10	5	5		
կալանավորվածներին պահելու վայր	52	50	618	31	100	45	96
Ընդամենը	161	236	795	135	128	60	123

«Երևան կենտրոն» քրեակատարողական հիմնարկ

«Երևան կենտրոն» քրեակատարողական հիմնարկը (պետ՝ Ն. Խլղաթյան), որը գտնվում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության շենքում, դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան:

Ի տարբերություն այլ ՔԿՀ-երի, որոնք 2001թ-ից փոխանցվեցին ԱՆ ենթակայության տակ, այն միայն 2003թ. Հունվարից անցավ այդ նախարարության ենթակայությանը: Խմբին դեռևս հայտնի չէ որևէ օրենսդրական կամ ենթօրենսդրական փաստաթուղթ, որի հիման վրա կալանավորվածները պահվում են «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում: Խմբի դիտարկումները թույլ են տալիս ենթադրելու, որ «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում պահվում են քաղաքական ենթատեքստ պարունակող քրեական մեղադրանքով ձերբակալված անձինք (օրինակ՝ 2004-ի ապրիլին ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին մասնակցած, այնուհետև ձերբակալված ընդդիմության ներկայացուցիչներ), օտարերկրացիներ, ինչպես նաև առանձին դեպքերում հասարակական հնչեղություն ստացած քրեական գործերով մեղադրյալ անձինք: Ի տարբերություն մյուս ՔԿՀ-ների, «Երևան կենտրոն» ՔԿՀ խմբի այցելությունը սկսվում է ԱԱԾ անցագրային կետից, փաստորեն ՔԿՀ մուտք գործելը նույնացվում է ԱԱԾ մուտք գործելու հետ:

«Երևան կենտրոն» ՔԿՀ-ի խցերում բնակավայրերը համապատասխանում է ընդունված չափանիշներին, հատակը փայտյա է, մահճակալները մեկ հարկանի: Էլեկտրական լամպը մշտապես վառվում է, քանի որ անջատիչները գտնվում են խցերից դուրս: Խցերի դռների վրա եղած դիտակետերից բացի, առկա են նաև պատերի վրա գտնվող դիտակետեր, որոնց տեսադաշտերն ընդգրկում են խցերի ամբողջ տարածքը:

Խցերում զուգարանները մեկուսացված չեն, բացակայում են էլ. Վարդակները, եւ կալանավորները թեյ, սուրճ պատրաստելիս օգտվում են չոր սպիրտից:

Քանի որ խցերում չկա օդափոխման համակարգ, այրվող սպիրտի բյուրեղները բացասական ազդեցություն են ունենում կալանավորների առողջության վրա: Կալանավորները շաբաթական մեկ անգամ են օգտվում լողարանից: Լողարանը գտնվում է նկուղային հարկում եւ ունի 2 ցնցուղ, որը անհարմարություններ է ստեղծում կալանավորների համար, քանի որ նրանց տանում են ըստ խցերի, եւ հաճախ միանգամից 4 կամ 5 հոգով են ընդունում լողանք 2 ցնցուղի տակ: Հիմնարկում անկողնային պարագաները հնամաշ են, սպիտակեղենը խունացած, եւ կալանավորները հիմնականում օգտվում են հարազատների բերած սպիտակեղենից: Հիմնարկը կալանավորներին տալիս է զուգարանի թուղթ եւ օճառ, աստամի մածուկ, սակայն կին կալանավորներին չեն տրվում հիգիենիկ փաթեթներ:

Կալանավորները հիմնականում օգտվում են հարազատների բերած սննդից, համարելով, որ հիմնարկի սնունդը բավարար որակի չէ:

«Երևան կենտրոն» ՔԿՀ-ում արտաքին աշխարհի հետ կապը չի համապատասխանում օրենքով սահմանված չափանիշներին: Հիմնարկի ներսում գործող ռադիոհանգույցով հեռարձակվում են «Արմենակոբ» ռադիոկայանի հաղորդումները: Կալանավորվածներին չի թույլատրվում ունենալ ռադիոընդունիչներ: Բացի այդ, կալանավորները զրկված են թերթեր ստանալու հնարավորությունից, բայց ծանոթանում են հիմնարկի պետի կողմից ընտրված թերթերին («Հայաստանի Հանրապետություն», «Հայոց Աշխարհ», «Ազգ»):

Կալանավորները զրկված են հեռախոսակապից, միայն առանձին դեպքերում հիմնարկի պետի ցանկությամբ որոշ կալանավորներ կարող են օգտվել պետի ծառայողական հեռախոսից: Հիմնարկում չի պահպանվում նամակագրության գաղտնիությունը, նամակների բացումը եւ ընթերցումը բացատրվում է այլ իրեր փնտրելու պատճառաբանությամբ:

«Երևան կենտրոն» ՔԿՀ-ում, հակառակ «ՀՀ ձերբակալվածներին և կալանավորված-

ներին պահելու մասին» օրենքի 31 հոդվածի 11 կետի պահանջների, օտարերկրյա քաղաքացիները ՀՀ քաղաքացիներից անջատ չեն պահվում: Բացի այդ, օտարերկրյա քաղաքացիներին իրենց համար հասկանալի լեզվով չեն բացատրվում նրանց իրավունքները:

Կալանավորվածներին պահելու մասին օրենքի 31 հոդվածի 5 կետի համաձայն «դատարանների, իրավապահ, մաքսային եւ հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաեւ ոստիկանության զորքերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք պահվում են մյուսներից անջատ», սակայն 2005թ. Դեկտեմբերի 30-ին «Վարդաշեն» ՔԿՀ-ից, որը նախատեսված է նախկին իրավապահ մարմինների աշխատակիցների համար, առանց որևէ պատճառաբանության «Կենտրոն» ՔԿՀ է տեղափոխվել նախկինում դատախազության աշխատակից, այժմ փաստաբան Վահե Գրիգորյանը: Նա պահվել է ընդհանուր խցում այլ կալանավորների հետ, որոնց մեջ եղել է կրկնահացագործ:

«Երևան կենտրոն» ՔԿՀ-ում պահվող կալանավորների և նրանց փաստաբանների մոտ կասկածներ կան, որ նրանց հանդիպումները գաղտնալավում են: Զեկույցի պատրաստման ընթացքում «Առավոտ» օրաթերթում (4.03.2006թ.) հրապարակում եղավ ըստ որի ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետ Ա. Միրզոյանը դիմել է ՀՀ Կառավարությանն առընթեր օպերատիվ տեխնիկական վարչության պետ Ռ. Ափոյանին, խնդրելով հանձնարարել համապատասխան ծառայությունների տեսաձայնագրառել և ձայնագրառել «Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող մեղադրյալներ Զավեն և Վլադիմիր Մկրտչյանների և նրանց պաշտպանների առանձնատեսակցությունները և արդյունքների մասին հայտնել նախաքննության մարմիններին:

2005թ. «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում արձանագրվել է նաև անօրինական անազատության մեջ պահելու դեպք: Այնտեղ պահվող Միլվա Ասատրյանի կալանքի տակ պահելու ժամկետը լրացել

էր 23.11.2005 ժամը 17:45-ին: Առաջին առյուծի դատարանը 22.11.2005-ին մերժել է կալանքը երկարացնելու մասին միջնորդությունը: Որոշումը նույն օրը ժամը 11:00-ին ներկայացվել է «Կենտրոն» ՔԿՀ: Ս. Ասատրյանը 23.11.2005-ին ՔԿՀ-ի 4 աշխատակիցների հսկողությամբ ուղարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի նիստը հետաձգվել է մինչև 24.11.2005թ, սակայն Ս. Ասատրյանին չեն ազատել, այլ տարել են «Կենտրոն» ՔԿՀ և անօրինական անազատության մեջ պահել մինչև 24.11.2005թ., երբ և կայացվել է վերաքննիչ դատարանի որոշումը կալանքի ժամկետը երկարացնելու մասին:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ի կողմից հրապարակված «Կալանավորված անձանց իրավունքները Հայաստանում» գրքույկը, համաձայն ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության հետ պայմանավորվածության, պետք է բաժանվեր քրեակատարողական հիմնարկների բոլոր խցերում: «Կենտրոն» ՔԿՀ-ն միակն է, որտեղ գրքույկները չեն տարածվել:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ չնայած «Երևան կենտրոն» ՔԿՀ-ն իրավական կարգավիճակով գտնվում է Արդարադատության նախարարության ենթակայության տակ, բայց փաստորեն գործում է որպես Ազգային անվտանգության ծառայության մեկուսարան:

Առաջարկություններ

1. Խցերում տեղադրել վարդակներ, ինչը թույլ կտա կալանավորներին հրաժարվել վնասակար չոր սպիրտ այրելու անհրաժեշտությունից, նաև ունենալ հեռուստացույցներ կամ ռադիոընդունիչներ միացնելու հնարավորություն:

2. Ինչպես բոլոր ՔԿՀ-ներում, հիմնարկում տեղադրել քարտային հեռախոս:

3. Թույլ տալ կալանավորներին ստանալ իրենց նախընտրած մամուլը:

4. Խցերում տեղադրել ռադիո:

5. Խցերում մեկուսացնել զուգարանները:

6. Լողարանում ավելացնել ցնցուղների քանակը:

Հաշվի առնելով, որ «Երևան կենտրոն» ՔԿՀ-ն գտնվում է Ազգային անվտանգության ծառայության տարածքում և տեխնիկապես հնարավոր չէ հիմնարկ-

ները տարանջատել, առաջարկում ենք դադարեցնել «Երևան կենտրոն» ՔԿՀ-ի գործունեությունը:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ

«Գորիս» ՔԿՀ ծառայում է ինչպես Հայաստանի հարավային շրջանների համար կալանավայր, այնպես էլ Հայաստանում միակ ՔԿՀ, որտեղ դատապարտյալները (առանձնապես վտանգավոր ել ցմահ դատապարտվածներ) պահվում են բանտային ռեժիմով: Կալանավորվածների հատկացված են 2 խցեր:

Հիմնարկի խցերը տարբեր չափերի են՝ 2-ից մինչև 12 տեղանոց: Ցմահ դատապարտյալների խցերը նորոգված են, իսկ մնացած խցերը անմխիթար վիճակում են բետոնե հատակով, խունացած պատերով, ջրատար խողովակները ծայրահեղ հնացած:

Խցերում զուգարանները մեկուսացված չեն: Կալանավորները բողբոջում են փայտոջիլների առկայությունից: «Գորիս» ՔԿՀ-ն ապահովված է ջեռուցման համակարգով: Սակայն, քանի որ ջեռուցման համակարգը միացվում է դեկտեմբերի 1-ից, Խմբի հերթական այցելության ժամանակ (2005թ. նոյեմբերի 18) Գորիսում երեկոյան ժամը 21.30-ին +6°C էր, եւ խցերում բավականին ցուրտ էր, իսկ կալանավորները հնարավորություն չունեին էլեկտրական ջեռուցման սարքեր միացնելու: Բացի այդ, կալանավորներն ունեին ընդամենը մեկական ծածկոց, իսկ լրացուցիչ ծածկոց չէր տրամադրվում:

Չնայած էլեկտրական հոսանքի մշտական առկայությանը (էլեկտրական լամպը վառվում է մշտապես), կենցաղային օգտագործման համար էլեկտրական հոսանքը տրվում է սահմանված գրաֆիկով (4 անգամ մեկական ժամով): Հիմնարկի պետը դա բացատրեց իրենց տրամադրված հոսանքի համար նախատեսված ծախսի չափաբաժնով: Մեր կարծիքով այս բացատրությունը ընդունելի չէ,

քանի որ սահմանափակում է կալանավորի թեյ կամ սուրճ պատրաստելու, այնպես էլ հեռուստացույց նայելու հնարավորությունը:

34 խցի պատուհանի շրջանակը չէր ամրանում պատին, ինչի պատճառով ցերեկային ժամերին պատուհանը ամբողջությամբ իջեցնում էին, որպեսզի չընկնի և չջարդվի: Պարզ չէ, թե ինչպես էր այն ամրացվում գիշերային ժամերին: Բացի այդ, պատուհանի ապակիներից մեկը բացակայում էր¹:

«Գորիս» ՔԿՀ-ում հացի և սննդի որակը բավարար է:

«Գորիս» ՔԿՀ-ի պատժախցերի մակերեսը (մոտ 4.5 մ²) չի համապատասխանում խցերի համար նախատեսված միջազգային չափանիշներին (առնվազն 6 մ²), որը կարելի է համարել անմարդկային պայմաններ:

Ընդհանուր առմամբ ծանր է «Գորիս» ՔԿՀ-ում դատապարտյալների բարոյահոգեբանական վիճակը: Դատապարտյալները երկարատև ժամանակ գտնվելով խցային պայմաններում, շփվելով միայն իրենց խցի դատապարտյալների հետ նաև զբոսանքի ժամանակ, չունենալով սպորտային խաղերով զբաղվելու հնարավորություն, հաճախ հայտնվում են դեպրեսիայի վիճակում: Հիմնարկում չի գործում հոգեբանական ծառայությունը: Միայն 2004թ. հիմնարկում եղել են 2 ինքնասպանության և բազմաթիվ ինքնավնասման դեպքեր:

2005թ. նոյեմբերի 17-ի Խմբի այցելության ընթացքում հայտնաբերվեց, որ հիմնարկում պահվող մեկ դատապարտյալ հայտարարել է հացադուլ, համաձայն չլինելով,


¹ Խմբի հաջորդ այցելության ժամանակ պարզվեց, որ հիմնարկի ղեկավարությունը, հաշվի առնելով Խմբի դիտողությունները, կալանավորվածներին տեղափոխել է այլ խուց:

որ իրեն տեղափոխել են այդ հիմնարկ: Նա պահանջում էր իրեն տեղափոխել իր բնակության վայրին ավելի մոտ գտնվող որևէ այլ հիմնարկ, նշելով, որ իր ընտանիքը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում: Այդ խնդրանքով նա դիմումներ էր ուղարկել Արդարադատության նախարարին և Քրեակատարողական վարչության պետին, սակայն պատասխան չէր ստացել: Հացադուլավորին պահում էին պատժախցում, որը մեր կարծիքով ոչ միայն անթույլատրելի է, այլև կրում է պատժի բնույթ: Հիմնարկի պետը դա բացատրեց նրանով, որ հացադուլավորին պետք է մեկուսացնել, իսկ այլ ազատ խուց հիմնարկում չկա:

«Գորիս» ՔԿՀ Խմբի այցելություններից մեկի ժամանակ մեկ կալանավորից բողոք ստացվեց իր առողջության վերաբերյալ: Նրա խոսքերով դեռ մինչև կալանավորումը ստացել է ոտքի կոտրվածք: Մի քանի վիրահատումից հետո ոտքի կրունկային մասում տեղադրվել է մետաղյա ձող: Ձեռքակալման ժամանակ տեղի է ունեցել ձողի տեղաշարժ, որի պատճառով մի քանի անգամ դիմել է հիմնարկի պետին խնդրանքով, որպեսզի թույլատրեն իր բուժող բժշկին զննելու վնասված ոտքը, սակայն մերժվել է: Կալանավորը խնդրեց Խմբի անդամներին, որպեսզի Խումբը միջնորդի հիմնարկի պետին թույլատրել իր բուժող բժշկին այցելություն կատարել հիմնարկ, զննել իր վիճակը և անհրաժեշտության դեպքում տեղափոխել «Հիվանդանոց դատապարտյալների համար» ՔԿՀ հետազոտման և համապատասխան բուժում ստանալու համար: Խմբի անդամները այս դեպքի մասին հայտնեցին հիմնարկի պետին /Շ. Մանուշարյան/, որը խոստացավ կալանավորի բուժող բժշկի այցելության դեպքում որևէ խոչընդոտ չհարուցել և անհրաժեշտության դեպքում կազմակերպել նաև կալանավորի տեղափոխումը «Հիվանդանոց դատապարտյալների համար» ՔԿՀ: Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տվել, որ կալանավորի բուժող բժիշկը նրա հոր հետ այցելել է հիմնարկ, սակայն հիմնարկի պետը թույլ չի տվել, որպեսզի հանդիպումը կայանա, որի մասին Խմբին տեղյակ է պահել կալանավորի հայրը: Խմբի հաջորդ այցելության ժամանակ հիմնարկի պետը ժխտեց այս փաստերը: Խումբը այս հարցը ներկայացրեց նաև Քրեա-

կատարողական վարչության պետին, որը նույնպես խոստացավ հնարավոր կարճ ժամանակում լուծել այս խնդիրը: Որոշ ժամանակ անց Խմբին դիմեց նույն կալանավորի հայրը և հետաքրքրվեց, թե երբ են իր որդուն ենթարկելու բժշկական հետազոտման, և անհանգստություն հայտնեց իր որդու առողջական վիճակով: Նորից դիմեցինք Վարչության պետին, որը նորից խոստացավ լուծել այդ խնդիրը, և այս չիրականացված խոստումները շարունակվեցին գրեթե 3 ամիս: Իվերջո Քրեակատարողական վարչությունից հայտնեցին, որ կալանավորը գրավոր դիմումով հրաժարվել է տեղափոխվել հիվանդանոց և ենթարկվել բժշկական հետազոտության:

Կալանավորվածների խցերում բացակայում էին ինչպես իրավունքների և պարտականությունների կանոնները, այնպես էլ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» կողմից հրատարակված «Կալանավորված անձանց իրավունքները Հայաստանում» գրքույկը, չնայած ըստ Քրեակատարողական վարչության հետ պայմանավորվածության, այն պիտի լինի բոլոր խցերում²: Պարզվեց, որ կալանավորվածները չգիտեն իրենց որոշ իրավունքներ: Օրինակ, երկու խցերում էլ կալանավորները նշում էին, որ տեսակցություն իրենց հարազատների հետ կարող են ունենալ միայն քննիչի գրավոր թույլատվությամբ: Այցելելով հանձնույնների ընդունման կետ, դիտորդական խմբի անդամներն այնտեղ հայտնաբերեցին ազատագրվածների հարազատների համար փակցված մի անստորագիր ապակողմնորոշող փաստաթուղթ, որում նույնպես նշված էր տեսակցություններ ստանալու վերաբերյալ դեռևս 2002-ից չգործող դրույթը:



² Այցելության ընթացքում հիմնարկի անձնակազմը կալանավորներին հատկացրեց գրքույկի օրինակներին:

Տվյալ փաստը խիստ զարմացրեց հիմնարկի պետին, և նա խոստացավ շտկել այդ «բացթողումը»³:

Հիմնարկում կա 1 կարանտինային խուց: Սակայն խցերի սակավության պատճառով կարանտինային խուցը հիմնականում զբաղեցված է լինում որևէ դատապարտյալով: Փաստորեն հիմնարկում չեն իրականացվում կարանտինային միջոցառումներ:

Առաջարկություններ

1. Հիմնովին նորոգել խցերը, մեկուսացնել զուգարանները:

2. Խցերում պարբերաբար անցկացնել միջատների դեմ ախտահանիչ միջոցառումներ:

3. Կառուցել մարզահրապարակ, հնարավորություն տալով ազատազրկվածներին զբաղվել սպորտային խաղերով:

4. Խցերի էլեկտրական վարդակներում հոսանքի մատակարարումը դարձնել շուրջօրյա:

5. Սոցիալ-հոգեբանական ծառայությունը համալրել հոգեբաններով:

6. Նախատեսված պատժախցերը այլևս չօգտագործել:

7. Կարանտինային խուցը կիրառել ըստ նշանակության:

8. Հավուր պատշաճի կալանավորներին իրազեկել իրենց իրավունքների մասին:

9. Բացառել հացադուլավորներին պատժախուց տեղափոխելը:

10. Ջեռուցման համակարգը միացնել խցերում անհրաժեշտ ջերմաստիճան ապահովելու համար:

³ Խմբի հաջորդ այցելության ժամանակ ցուցանակը շտկված էր:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի շենքը կառուցվել է 19-րդ դարում: Այն կառուցված է ստորգետնյա ջրառատ տեղայնքում, ինչի պատճառով խցերում խոնավությունը հասնում է մինչև 80%-ի, որը գերազանցում է ընդունված թույլատրելի չափանիշը: Բարձր խոնավությունը կարող է բազմաթիվ հիվանդությունների, մասնավորապես թոքախտի խթանիչ պատճառ դառնալ:

Քրեակատարողական հիմնարկի պետ Շ. Ալչանգյանի հավաստմամբ նոր շենքի շինարարությունը կավարտվի 2006թ. վերջին: Պետք է նշեց, որ քրեակատարողական հիմնարկի շենքի կառուցման առաջին փուլը (2004-ին դրամի ծավալով) ավարտվել է, ներկայումս շինարարական աշխատանքները դադարեցված են, և շինարարության 2-րդ փուլի աշխատանքները կվերսկսվեն 2006թ. ապրիլի մեկից:

Հիմնարկում ապամոնտաժվել է 200 մահճակալ՝ յուրաքանչյուր կալանավորի 4քմ տարածքով ապահովելու նպատակով: Թոքախտով հիվանդները պահվում են Կարմիր Խաչի կողմից վերանորոգված խցերում: Ըստ թոքախտով հիվանդ կալանավորների վկայության, հիմնարկի բժշկի կողմից նրանց տրամադրվում է անհրաժեշտ դեղորայք, և այդ առումով բողոքներ չկային:

Խցերի պատերին փակցված են կալանավորների իրավունքերի և պարտականությունների մասին ցուցակը:

Հանձնույնների ընդունման սենյակի պատերին փակցված են տեսակցությունների և հանձնույնների պարբերականության վերաբերյալ օրենսդրության հատվածները: Կալանավորների հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրանք տեղյակ են տեսակցությունների և հանձնույնների հաճախականության մասին օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքներին, և բողոքներ չներկայացվեցին դրանց վերաբերյալ:

Կալանավորների անկողնային պարագաների մասին մեր հարցումները պարզեցին, որ շաբաթը մեկ անգամ հիմնարկը փոխում է դրանք: Կային կալանավորներ, որոնք հիմնարկի ղեկավարության համաձայնությամբ օգտագործում էին իրենց անձնական անկողնային պարագաները, որոնք փոխարինում էին իրենց հարագատների օգնությամբ:

Կալանավորները հայտնեցին, որ շաբաթը մեկ անգամ լողանում են 12-20 րոպե տևողությամբ:

Կալանավորների հետ զրույցների ընթացքում չկային բողոքներ սննդի որակի և անձնակազմի կողմից վերաբերմունքի վերաբերյալ:

Խցերում միջատների առկայության մասին ահազանգեր կամ բողոքներ նույնպես չկային:

Կալանավորների կողմից եղան բողոքներ ռադիոյի բացակայության մասին: Հիմնարկի աշխատակիցների բացատրությամբ ներքին ռադիոն ունի, սակայն Վանաձորում լարային ռադիոյի աշխատանքների դադարեցման պատճառով հնարավոր չէ այն աշխատեցնել: Եթե կալանավորները կարողանան ձեռք բերել էլեկտրական ռադիոընդունիչներ, ինդիքը կլուծվի: Կալանավորները բողոքեցին նաև տեղեկատվության այլ միջոցների, մասնավորապես թերթերի բացակայությունից: Ըստ հիմնարկի աշխատակցի բացատրության, թերթերը ստանում են վարչությունից, որոնք հնացած են լինում և տեղեկատվական բացը չեն կարող լրացնել:

Պետի հավաստմամբ հատուկ միջոցների կիրառման դեպքեր չեն եղել: Նրա ասելով իր պաշտոնավարման ժամանակ (վերջին 4 տարում) ընդհանրապես նման անհրաժեշտություն չի եղել: Կալանավորների հետ առանձնազրույցների ընթացքում նույնպես հատուկ միջոցների կիրառման՝ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին տեղեկատվություն կամ բողոք չեն ստացվել:

Կալանավորների հավաստմամբ ընդունման ժամանակ իրենց բացատրվել են կալանավորի իրավունքները և պարտականությունները:

Միաժամանակ համարյա բոլոր կալանավորները բողոքում էին ՁՊՎ-ում և ռազմական ոստիկանության մեկուսարաններում ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի, խոշտանգման և հոգեբանական ճնշումների փաստերի մասին: Ըստ կալանավորների վկայության նման մեթոդները զանգվածային բնույթ են կրում թե քաղաքացիական, թե զինվորական անձանց նկատմամբ: Մեր կողմից կալանավորների ընդունման և գննության մատյանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կալանավորված անձանց զգալի մասը ՁՊՎ-ից քրեակատարողական հիմնարկություն ընդունվում են վնասվածքներով:

Այցելության ժամանակ պատժախուցը և մոլեգնախուցը դատարկ էին: Պատժախուցը այցի ժամանակ (ցերեկվա ժամը 12:00-13:00) խավար էր, լուսավորությունը անբավարար, սանհանգույցը առանձնացված չէր: Պատժախցի հատակը նախկինում բետոնապատվածի փոխարեն այժմ տախտակապատված էր: Պատժախուցը մեկտեղանոց է, մակերեսը 5-6 քմ:

Մոլեգնախցի պատերը բետոնապատված էին, այլ առարկաներ չկային: Բացակայում էր նաև սանհանգույցը:

Պատժախցում և մոլեգնախցում փակցված չէ կալանավորված անձանց իրավունքների և պարտականությունների մասին թերթիկը:

Համարում ենք, որ նման պայմաններում մարդկանց պահելը կարելի է գնահատել որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվում են կալանավորված և դատապարտված կանայք եւ անչափահասներ: Կալանավորվածների համար նախատեսված է առանձին մասնաշենք, որտեղ կանայք և անչափահասները պահվում են առանձին խցերում: Մասնաշենքն ունի 16 խուց երկու հարկերում: Ընդ որում, առաջին հարկի խցերը չափազանց խոնավ են, և այնտեղ կալանավորվածներին պահելը, առավել ևս հաշվի առնելով, որ նրանք կանայք և անչափահասներ են, անցանկալի է:

Խցային պայմանները հիմնարկում չափազանց հեռու են բարվոք լինելուց: Խցերում չի պահպանվում 1 անձի համար նախատեսված 4քմ. տարածքի չափանիշը: «Աբովյան» ՔԿՀ-ը միակն է, որտեղ պատուհանների ճաղավանդակները տեղադրված են և դրսի կողմից և ներսի, որի պատճառով կալանավորները չեն կարողանում բացել պատուհանները: Ամառը օդափոխություն ապահովելու նպատակով դեկավարության կողմից հանվում են պատուհանների ապակիները, ինչը չի կարող հարցի լուծում համարվել: Անվտանգության նկատառումներով վերջերս սկսել են ներսի կողմից ճաղավանդակներ տեղադրել ցմահ դատապարտյալների խցերում: Դրանք տեղադրվում են այնպես, որպեսզի պատուհանը բացելու հնարավորություն լինի:

Խցերում ջրատար համակարգը ծայրաստիճան մաշված է: Հիմնարկում չկա ջեռուցման համակարգ: Ձմեռային ամիսներին ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքավորումների միջոցով: Մակայն գիշերային ժամերին հոսանքը խցերում անջատվում է, և կալանավորները խցերում մրսում են: Ղեկավարությունը սա բացատրում է էլեկտրաէներգիայի խնայողությամբ:

Կին կալանավորները բողոքում էին անձնական հիգիենայի ապահովման ոչ բավարար հնարավորություններից: Ըստ

օրենքի հիմնարկը պարտավոր է շաբաթը առնվազն 1 անգամ ապահովել կալանավորների լոգանքը: Մա չի նշանակում, որ հատկապես կանանց համար չի կարելի լոգանքը կազմակերպել ավելի հաճախ, սակայն այդպիսի նախաձեռնություն չի դրսևորվում: «Աբովյան» հիմնարկի խցերի մի մասում սանհանգույցները այնպես են կառուցված, որ դրանք կարելի է լողասենյակներ դարձնել, այդպիսով ապահովելով կանանց ամենօրյա ցնցուղով լողանալու հնարավորություն: Բացի այդ, չնայած ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված «Քրեակատարողական համակարգում պահվող անձանց սննդի, հանդերձանքի, անկողնային եւ սանիտարահիգիենիկ պարագաների չափաբաժինների»⁴, ըստ որի կանանց համար նախատեսված են հիգիենիկ պարագաներ, հիմնարկը պետության կողմից դրանք չի ստանում: Կալանավորներին հիգիենիկ պարագաներով մասամբ ապահովում են հարազատները և բարեգործական կազմակերպությունները:

Հիմնարկն ունի ընդամենը մեկ զբոսահրապարակ: Հաշվի առնելով, որ կին և անչափահաս կալանավորները ունեն օրական երկու ժամյա զբոսանքի հնարավորություն, սպա ակնհայտ է, որ այդ զբոսահրապարակը չի կարող ապահովել օրենքի պահանջները:

«Աբովյան» ՔԿՀ-ն ունի տեսակցության չորս սենյակ, որոնք նույնպես վերանորոգման կարիք ունեն, կահույքը՝ աթոռներ են եւ կիսաջարդ բազկաթոռներ, ջեռուցում նախատեսված չէ, երկու սենյակներում վարդակներ չկային: Դա նշանակում է, որ այդ սենյակները հնարավոր չէ տաքացնել նույնիսկ էլեկտրական սարքերով: Մենյակներից մեկը պատուհաններ չունի, մյուսների պատուհանները ներկված են եւ չեն բացվում, փողոցից լսվում է սենյակում ընթացող զրույցը: Տեսակցության սենյակների մոտակայքում չկա զուգարան, ինչը ջեռուցման բացակայության հետ մեկտեղ

⁴ N 413-Ն, 2003 թվականի ապրիլի 10

կարող է ազդել տեսակցությունների տևողության վրա:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հանձնուքի փոխանցման համար սենյակ նախատեսված չէ: Այն ընդունվում է դեպի փողոց բացվող պատուհանից: Հանձնուքի փոխանցման կամ այլ կարգի վերաբերյալ փաստաթղթեր փակցված չեն: Հանձնուք բերող հարազատները ստիպված են դրսում սպասել մինչև հանձնուքը կընդունվի: Մոտակա զուգարանը գտնվում է ադմինիստրացիայի մասնաշենքում, ինչը նույնպես անհարմարություններ է առաջացնում: Խմրի այցելություններից մեկի ժամանակ գրանցվել է դեպք, երբ մի քաղաքացի, որ իր մանկահասակ երեխայի հետ հանձնուք էր բերել, երկար ժամանակ կանգնել էր հերթում, ինչից հետո նրան հայտարարել էին, որ աշխատանքային ժամն ավարտվել է, և հանձնուքներ այլևս չեն ընդունվում: Հաշվի առնելով, որ «Աբովյան» ՔԿՀ-ն միակն է Հայաստանում, ուր պահվում են կանայք և անչափահասներ, և մարդիկ հաճախակի հեռավոր շրջաններից են գալիս, համարում ենք նման վերաբերմունքը անթույլատրելի:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ չնայած վերջին տարիներին այլ ՔԿՀ-ներում իրականացվում են լայնամասշտաբ շինարարական և վերանորոգման աշխատանքներ, «Աբովյան» ՔԿՀ-ն կարծես դուրս է մնացել ուշադրությունից: Առավել ևս երբ փորձում ենք համեմատել կանանց և անչափահասների համար ստեղծված պայմանները իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների համար ստեղծած պայմանների հետ:

Առաջարկություններ

1. Առաջնահերթության կարգով վերանորոգել կալավորվածներին պահելու մասնաշենքը:

2. Հաշվի առնելով, որ խցերի ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերի միջոցով, բացառել հոսանքի անջատումները խցերում:

3. Ավելացնել լոգանք ընդունելու հաճախականությունը կանանց համար:

4. Կանանց ապահովել հիգիենիկ պարագաներով:

5. Ստեղծել սպասասրահ հարազատների համար, որտեղ փակցնել անհրաժեշտ փաստաթղթերը:

6. Վերանորոգել տեսակցության սենյակները: Դրանց մոտակայքում կառուցել զուգարան, որից թե՛ կալանավորները, թե՛ հարազատները կկարողանան ազատ օգտվել:

7. Ավելացնել զբոսահրապարակների քանակը:

8. Բացառել 1-ին հարկի խցերի օգտագործումը:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը Հայաստանի կենտրոնական ԿՊՎ-ն է: Հիմնարկը կատարում է ինչպես ԿՊՎ-ի, այնպես էլ բաշխիչ հիմնարկի դեր: Բացի այդ, այստեղ է պահվում ցմահ դատապարտյալների մեծ մասը:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բոլոր խցերը միանման են՝ ունեն նույն մակերեսը (30քմ) եւ ի սկզբանե նախատեսված են եղել 12 հոգու համար (բացառություն է կազմում 6-րդ մասնաշենքը), սակայն վերջին տարիներին 2-4 մահճակալներ ապամոնտավել են, որի շնորհիվ հիմնականում ապահովվում է 1 անձի համար 4քմ չափանիշը: Վերջին տարիներին իրականացված վերանորոգման աշխատանքների արդյունքում խցերում զուգարանները մեկուսացվել են: Հիմնականում պատուհանները չունեն ապակի և պատված են պոլիէթիլենով: Բացակայում են կալանավորների անձնական փոքր պահարանները:

Հիմնարկի 6-րդ բաժանմունքը գտնվում է հիմնական կառույցին կից մասնաշենքի 2-րդ հարկում: Բաժանմունքում տեղակայված է 15 խուց: Այստեղ կալանավորները տեղաբաշխվում են այն սկզբունքով, որ առավելապես մեկուսացված լինեն շրջապատից՝ կախված՝ քրեական գործի առանձնահատկությունից: Մասնաշենքում գործում է առավել խիստ կարգ:

Բաժանմունքն ունի իր բաղնիքը և զբոսանքի վայրը: Բաղնիքն ունի 2 բաժանմունք՝ նախասրահ և լոգարան: Նախասրահը յուղաներկված է, պատերին հարմարեցված են կախիչներ՝ հագուստի համար: Լոգարանը ունի 5 բաժանմունք:

Հիմնականում չի պահպանվում նախատեսված օրական 1 ժամյա զբոսանքը: Դա բացատրվում է անձնակազմի սակավությամբ: Զբոսահրապարակներում չկա սպորտով զբաղվելու հնարավորություն:

Չնայած Խմբի անդամները բազմիցս դիմել են հիմնարկի ղեկավարությանը կարանտինային խցերի կալանավորներին անկողնային սպիտակեղենով ապահովելու առաջարկությամբ, հարցը դեռևս լուծված չէ:

Արձանագրվել են դեպքեր, երբ ագատազրկվածների կողմից ուղարկված նամակները չեն հասել հասցեատերերին, ինչպես նաև մերժվել են լրագրողների հետ հանդիպելու նրանց ցանկությունները:

2005թ. ընթացքում Խումբը մի շարք ահազանգեր է ստացել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակազմի կողմից ագատազրկվածների նկատմամբ կիրառվող բռնությունների վերաբերյալ (տես «Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելում» բաժինը):

Նման փաստերի առկայությունը, ինչպես նաև դրանց ուսումնասիրման ոչ լիարժեք լինելը լուրջ մտահոգության տեղիք են տալիս: Կարծում ենք, որ անհրաժեշտ է նշված փաստերը ՀՀ Արդարադատության նախարարության կողմից անաչառ և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկվեն հետագայում նմանատիպ երևույթները բացառելու համար:

Առաջարկություններ

1. Ապահովել կալանավորների օրական 1 ժամյա զբոսանքը:
2. Բարելավել սննդի որակը:
3. Ապահովել նամակագրության իրավունքն ու գաղտնիությունը:
4. Կարանտինում պահվող կալանավորներին ապահովել անկողնային սպիտակեղենով:
5. Զբոսահրապարակներում հնարավորություն ստեղծել զբաղվելու սպորտային խաղերով:

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների համար: Այն բաղկացած է վարչական եւ ազատազրկվածներին պահելու համար նախատեսված մասնաշենքերից: Ընդ որում, ազատազրկվածներին պահելու համար նախատեսված մասնաշենքը բաղկացած է 2 գոտուց՝ կալանավորների և դատապարտյալների:

2003-2005թթ. հիմնարկը հիմնովին վերանորոգվել է, տեղադրվել են ժամանակակից պատուհաններ: Խցերը 2-4 տեղանոց են, հատակները՝ փայտյա: Ձուգարանները մեկուսացված և սալիկապատված են: Մանրի որակը բավարար է: Չնայած լույսի անջատիչները գտնվում են խցերից դուրս, սակայն «Վարդաշենը» միակ հիմնարկն է, ուր խցերում կիրառվում է 2 տիպի լուսավորություն՝ ցերեկային և գիշերային: Յուրաքանչյուր կալանավորի համար նախատեսված է անձնական իրերի փոքրիկ պահարան:

Հիմնարկն ունի երկու մեծ զբոսահրապարակ: Ի տարբերություն մյուս ՔԿՀ-

ների, այստեղ զբոսահրապարակները վերինից ճաղապատված չեն: Կալանավորները զբոսանքի են հանվում ոչ թե ըստ խցերի, այլ խառը տարբերակով (հաշվի առնելով, որ նույն քրեական գործով կալանավորները չշփվեն միմյանց հետ): Այս հանգամանքը հոգեբանական դրական ազդեցություն կարող է ունենալ, քանի որ կալանավորները շփման հնարավորություն ունեն ոչ միայն իրենց խցակիցների, այլև այլ անձանց հետ:

Ըստ հարցումների հիմնարկում անձնակազմի վերաբերմունքը կալանավորների նկատմամբ հիմնականում էականորեն տարբերվում է այլ ՔԿՀ-ներից: Վերաբերմունքը առավել բարյացակամ է և զերծ համակարգում ընդունված կարծրատիպերից:

Ներկայումս Հայաստանում գործող քրեակատարողական հիմնարկներից այստեղ ազատազրկվածներին պահելու պայմանները առավել մոտ են միջազգային չափանիշներին:

«Գյումրի» քրեակատարողական հիմնարկ

Հիմնարկն ունի 24 խուց, որոնցից 18-ը նորոգված էին: Ձուգարանները մասնակի մեկուսացված են, պատերը բարձրացված: Տեղանքը, ուր կառուցված է «Գյումրի» ՔԿՀ-ի շենքը, հարուստ է ստորգետնյա ջրերով, ինչի պատճառով այստեղ կատարվող վերանորոգման աշխատանքները անարդյունավետ են: Հիմնարկի ղեկավարության հավաստմամբ Կարմիր խաչի կազմակերպության հետ ձեռք է բերվել համաձայնություն ստորգետնյա ջրահեռացման աշխատանքներ սկսելու վերաբերյալ:

Խցերում չէր գործում ռադիոցանցը:

Վերջին շրջանում հիմնարկի բուժանձնակազմը համալրվել է նոր մասնագետներով՝ վիրաբույժ, ատամնաբույժ, քիթկոկորդի մասնագետ: Բուժմասնաշենքը առանձին մեկ հարկանի շինություն է, ուր խիստ խոնավության պատճառով նորոգման աշխատանքներ ընդհանրապես չեն կատարվում:

Հիմնարկի տեսակցության սենյակը շատ փոքր է, և դժվար է ապահովել օրենքով նախատեսված տեսակցությունների չափաքանակը:

Մնունդ

ԿՊՎ-ներում սննդի չափաբաժինները սահմանված են ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների մասին⁵ ՀՀ կառավարության որոշումով: Մակայն ցանկում հաստատված սննդամթերքի զգալի մասին Խմբի անդամները հիմնարկներում երբևիցե չեն հանդիպել (միրգ, հյութեր, պանիր, կաթ, ձու և այլն):

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների նյութական ապահովումը կատարվում է կենտրոնացված մատակարարման սկզբունքի համաձայն: Այսինքն, Քրեակատարողական վարչությունը կատարում է անհրաժեշտ գնումները «Պետական գնումների մասին» օրենքի համաձայն եւ մատակարարում հիմնարկներին: Այդ պատճառով որոշ սննդամթերքների բացակայությունը կամ եղած սննդամթերքի ցածր որակը հիմնարկի ղեկավարության կողմից չի կարող վերահսկվել: Եղած համակարգը բավականին ծախսատար է, քանի որ ամբողջ սննդամթերքը ստացվում է Երևանից, և մարզերում գտնվող հիմնարկները տրանսպորտային մեծ ծախսերի առաջ են կանգնում: Կարծում ենք, որ եթե բյուջետային միջոցները հատկացվեին անմիջապես հիմնարկներին, հնարավոր կլիներ նաև արդյունավետ վերահսկել և՛ սննդի որակը, և՛ տեսականին:

Ինչ վերաբերում է հիմնարկներում ազատագրվածներին տրվող սննդի որակին, ապա բացառությամբ 1-2 հիմնարկների, այն անբավարար է: Այդ պատճառով ազատագրվածները հնարավորության դեպքում աշխատում են չօգտվել հիմնարկի կողմից պատրաստված ճաշերից: Մնունդը հիմ-

նականում պատրաստում են տնտես-մասի դատապարտյալները, որոնք չունեն խոհարարի մասնագիտություն և չեն անցել համապատասխան դասընթացներ:

Որոշ հիմնարկների խոհանոցներում տիրում է հակասանիտարական վիճակ («Նուբարաշեն», «Գյումրի»): Խմբի այցելությունների ընթացքում հազվադեպ ենք հանդիպել, երբ խոհանոցում պահպանված է եղել նախորդ ճաշի նմուշը, ինչը թույլ կտար համաճարակների կամ սննդային թունավորումների դեպքում պարզել դրանց պատճառները:

Խոհանոցներում չկան սառնարաններ, ուր հնարավոր կլիներ պահել պահեստից ստացված սննդամթերքը: Հատկապես դա կարևոր է հանգստյան օրերին, քանի որ այդ օրերի համար սնունդը ստացվում է նախօրոք:

Ոչ բոլոր հիմնարկներն են ապահովում դիետիկ սննդով այն ազատագրվածներին, ովքեր ունեն դրա կարիքը:

Անմխիթար վիճակում են սննդի պահեստները, ինչի պատճառով պահեստավորված մթերքի զգալի մասը փչանում է: Հատկապես հակասանիտարական և հակահիգիենիկ վիճակում են թթվի հորերը:

«Գորիս» ՔԿՀ-ում ստացվել է տեղեկատվություն ազատագրվածներին, որպես պատիժ, ճաշից զրկելու դեպքերի մասին: «Նուբարաշեն» ՔԿՀ-ից նույնպես բազմաթիվ բողոքներ են ստացվել այն մասին, որ պատժախցում գտնվողները զրկվում են ճաշից: Սա և՛ ՀՀ օրենսդրության, և՛ միջազգային չափանիշների կոպիտ խախտում է:

Հիմնարկներում նաև տարբեր էր հացի որակը: «Նուբարաշեն», «Գորիս» եւ «Վանաձոր» հիմնարկները ունեն հացի փուռ: Ընդ որում, «Նուբարաշեն» հիմնարկն ունի նաև այրադաց: Եթե «Գորիս»-ի ու «Վանաձոր»-ի հացի որակը բավարար էր, ապա «Նուբարաշեն»-ի հարցված կալանավորվածները միաբերան նշում էին, որ հացի որակը հեռու է բավարար լինելուց (խոնավ է

⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշում:

եւ թթված): Խումբը այցելեց այդ փուտը եւ համոզվեց, որ հացի որակը ցածր է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ սննդի որակը հիմնարկներում հեշտությամբ կարելի է բարելավել այն դեպքում, երբ աշխատակազմը նույնպես իրավունք կունենա օգտվել այդ սննդից, ինչը Հայաստանում ներկայումս արգելված է: Ավելին, հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ խոհարարները իրենց համար առանձին սնունդ են պատրաստում և չեն օգտվում մնացած ազատազրկվածների համար իրենց իսկ կողմից պատրաստած սննդից:

Առաջարկություններ

1. Բարձրացնել սննդի որակը:
2. Պահեստներում ապահովել սննդի պահպանության համար պատշաճ պայմաններ:
3. Խոհանոցներում ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակ:
4. Խոհանոցները ապահովել սառնարաններով:
5. Ապահովել դիետիկ սնունդ ստանալու հնարավորություն բոլոր հիմնարկներում:
6. Ապահովել ազատազրկվածների սնունդը ըստ կառավարության կողմից հաստատված ցանկի:
7. Սննդի ձեռք բերման համար նախատեսված միջոցները հատկացնել անմիջապես հիմնարկներին:

Բուժսպասարկում

Բոլոր ՔԿՀ-ներում բուժսպասարկումը հեռու է բավարար լինելուց: Հիմնարկները համարված չեն ինչպես անհրաժեշտ մասնագետներով, այնպես էլ բժշկական սարքավորումներով և դեղորայքով: Բացի «Նուբարաշեն»-ից, մնացած հիմնարկներում չկան գործող ֆյուտուրոգրաֆիայի սարքավորումներ: Մոտավորապես 6 ամիսը մեկ անգամ հիմնարկներ է այցելում ֆյուտուրոգրաֆիայի անցկացման համար սարքավորված մեքենա, եւ ախտորոշվում են բոլոր կալանավորվածները: Մեր կարծիքով անմիջապես կարանտինային փուլում թոքախտի ախտորոշման հնարավորության բացակայությունը թույլ չի տալիս արդյունավետ պայքարել այդ հիվանդության տարածման դեմ: Նույնը վերաբերում է նաեւ այլ տարափոխիկ հիվանդություններին: Միայն «Նուբարաշեն» ՔԿՀ-ն է համարված տարբեր պրոֆիլների բժշկական անձնակազմով, որը նաեւ միակն է, որ ունի հոգեբույժ: Առավել մեծ է հոգեբույժի անհրաժեշտությունը «Գորիս» ՔԿՀ-ում, ուր դատապարտյալները պահվում են բանտային ռեժիմում:

Ատամնաբուժական ծառայությունը բոլոր ՔԿՀ-ներում, բացի աստամ հեռացնելուց, այլ բուժում չի իրականացնում: Ատամնաբուժական սարքավորումները հնամաշ են, և գործնականում հնարավոր չէ բուժում իրականացնել:

Դեղորայքի մատակարարումը ՔԿՀ-ներ կատարվում է կենտրոնացված՝ «Հիվանդանոց դատապարտյալների համար» ՔԿՀ-ից, որը բացարձակապես իրեն չի արդարացնում: ՔԿՀ-ներում չի բավարարում ինչպես դեղորայքի տեսականին, այնպես էլ քանակությունը: Կալանավորները, որպես կանոն, օգտվում են հարազատների կողմից բերված դեղորայքից: Հիմնարկների կողմից ինքնուրույն գնումներ կատարելու հնարավորությունը հատկապես կարեւոր է այն դեպքում, երբ որեւէ դեղամիջոցի հրատապ անհրաժեշտություն է առաջանում: Այս դեպքում

մատակարարման գործող մեխանիզմը ընդհանրապես կիրառելի չէ: Այսպիսի դեպքերի համար անհրաժեշտ է կամ որոշակի գումար տրամադրել հիմնարկներին, կամ պետք է լինի դեղատների ցանց, որից հիմնարկները կկարողանան անկանխիկ գնումներ կատարել:

Ըստ «Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի «Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն», սակայն օրենքի այս դրույթը արդյունավետ չի գործում և կապված է բյուրոկրատական քաշքշուկների հետ:

Խմբի կողմից կատարված դիտարկումները վկայում են այն մասին, որ ուսումնասիրված բժշկական արձանագրություններում ներառված են վնասվածքների սեղմ նկարագրությունը, շատ հազվադեպ՝ նաև ազատազրկվածի կողմից տրված բացատրությունը, թե ինչպես է այդ վնասվածքը ստացել: Անհատական գրույցների ընթացքում պարզվել է, որ բժշկական քննությունը հաճախ անցկացվում է նաև ոչ բժշկական անձնակազմի ներկայացուցիչների ներկայությամբ: Նման աշխատելաձևը բժշկական գաղտնիության սկզբունքի խախտում է և կարող է խոչընդոտել, որ մարդիկ իրեց հետ կատարվածի մասին ճշգրիտ ցուցմունքներ տան:

Շատ դեպքերում ազատազրկվածները տեղեկացված չեն լինում, որ ազատազրկման վայր մուտք գործելուն պես բոլորն անհապաղ պետք է ենթարկվեն բուժզննման տվյալ հիմնարկի բժշկական անձնակազմի կողմից: Այլապես ինչպես պատճառաբանել այն հանգամանքը, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվող Ա. Վ.-ն, երբ նրա անձնական գործերին կցված են եղել հանրապետության հոգեբուժարանի համապատասխան հաստատող տեղեկանքն առ այն, որ նա տառապում է հոգեկան

հիվանդությամբ, միայն մեր միջամտությունից հետո է տեղափոխվել համապատասխան հիմնարկի հոգեկան հիվանդների համար նախատեսված բաժանմունք:

Առաջարկություններ՝

1. ՔԿՀ-ները համալրել անհրաժեշտ բուժասրբավորումներով, հատկապես ֆլուորոգրաֆիկ սարքով, եւ ատամնաբուժական սարքավորումներով:

2. ՔԿՀ-ները դեղորայքի անհրաժեշտ տեսականիով և քանակությամբ ապահովելու համար դեղորայքի համար նախատեսված գումարը տրամադրել ՔԿՀ-ներին:

3. Կանոնակարգել և պարզեցնել անհրաժեշտության դեպքում հիվանդ կալանավորներին քաղաքացիական բուժհաստատություն տեղափոխելու հարցը:

4. Քաղաքացիական բուժհաստատությունների հետ պայմանագրեր կնքել, ապահովելով անհրաժեշտ բժշկ-մասնագետների պարբերաբար այցելությունները ՔԿՀ-ներ:

5. Համակարգում բուժսպասարկումը արդյունավետ դարձնելու համար ՔԿՀ-ների բուժճառայությունը փոխանցել Առողջապահության նախարարություն:

6. Պետք է գրանցվեն բժշկական քննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունները (ներառյալ՝ իր առողջական վիճակի նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն), ինչպես նաև օբյեկտիվ բժշկական արդյունքների ամբողջական պատկերը՝ հիմնված մանրամասն բժշկական քննության վրա: Մարմնական վնասվածքների մասին պետք է հայտնվի համապատասխան մարմիններին:

7. ՔԿՀ-ներում բժշկական քննությունները պետք է իրականացվեն հիմնարկի բժիշկների կողմից: Չպետք է

թույլ տալ, որ բժշկական քննություններն անցկացնեն ոչ բժշկական անձնակազմի անդամները: Բժշկական քննությունները պետք է անցկացվեն նրանց լսողության եւ տեսողության սահմաններից դուրս:

8. Ապահովել ազատագրված անձանց բուժօգնության դիմելու գաղտնիությունը, օրինակ՝ փակ ծրարի մեջ ուղարկվող նամակի միջոցով: Ազատագրված վայրի ծառայողները չպետք է փորձեն վերահսկել բժշկին դիմելու խնդրանքը:

Հոգեբանական խնդիրները քրեակատարողական հիմնարկներում

Հաշվետու ժամանակահատվածում ՔԿՀ այցելությունները հնարավորություն են տվել կատարել հետևյալ եզրակացությունները.

Խցերի կենցաղային պայմանների բարելավումը և ազատազրկվածների քանակի կրճատումը նախապայման են հանդիսանում նպաստավոր հոգեբանական, միջանձնային մթնոլորտի ստեղծմանը:

ՔԿՀ ՍՀԻԱ (քրեակատարողական վարչական, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների) բաժնի կողմից կազմված «Կալանավորված անձանց ուսումնասիրության քարտ»-ի և «Դատապարտյալների անհատական քարտ»-ի քննարկումը և ներդրումն առավել արդյունավետ են կատարվել «Աբովյան», «Էրեբունի», «Գյումրի» և «Երևան կենտրոն» ՔԿ հիմնարկներում:

Ազատազրկվածների հոգեբանական վիճակների վրա մեծ ազդեցություն ունեն ՔԿ հիմնարկի լիարժեք բժշկական ծառայության առկայությունը և դրա աշխատանքը: Սակայն ոչ բոլոր ՔԿ հիմնարկների բժշկական ծառայություններն են ապահովված անհրաժեշտ բժշկական գործիքներով, սարքավորումներով ու մասնագետներով:

Հատուկ ուշադրության խնդիր է ազատազրկվածների զբաղվածության հարցը: Ազատազրկման պայմանները և զբաղվածության բացակայությունը բացասաբար են ազդում նրանց վերափոխման և հասարակություն վերադառնալու գործընթացի վրա: Այս խնդիրը որոշ չափով լուծված է «Աբովյան» ՔԿՀ-ում:

Չնայած որոշ հիմնարկներում գործում է հոգեբանական ծառայություն, սակայն այն դեռևս հեռու է բավարար լինելուց:

Առաջարկություններ

1. Հատուկ ուշադրություն դարձնել ՔՀԿ-ի աշխատակիցների հոգեբանական վիճակների բարելավմանը:

2. Հոգեբանական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպել որակավորման բարձրացման և ուսուցման դիֆերենցված դասընթացներ՝ հոգեբանների, սոցիալական աշխատողների և տարբեր ծառայությունների աշխատակիցների համար: Արդարադատության նախարարության աջակցությամբ նման ուսուցումներ են կազմակերպվել ՔԿ հիմնարկների տարբեր ծառայությունների աշխատակիցների համար:

3. Մշակել շերտավորված հոգեբանական գործնական ձեռնարկներ՝ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար:

4. Բացահայտել և շտկել այն հոգեկան փոփոխությունները, որոնք առաջանում են մարդկանց մեջ՝ ազատազրկվելու պահից:

5. Ուսումնասիրել և բարելավել միջանձնային և սոցիալ հոգեբանական մթնոլորտը քրեակատարողական հիմնարկներում:

6. Ստեղծել այնպիսի հոգեբանական վիճակ, որը նպաստի ազատազրկվածների դարձի բերմանը և հասարակության լիարժեք անդամ դառնալուն:

7. Ուսումնասիրել և բարելավել ՔԿՀ-ի աշխատակիցների հոգեբանական վիճակները:

Կապ արտաքին աշխարհի հետ

Տեսակցություններ

Ըստ «Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի⁶, կալանավորված անձանց թույլատրվում է ունենալ ամսական առնվազն երկու տեսակցություն՝ մինչեւ 3 ժամ տեւողությամբ: Գործնականում հիմնարկների ղեկավարության կողմից սա հասկացվում է որպես առավելագույնը 2 տեսակցություն: Նախաքննական մարմինը կարող է արգելել կալանավորվածի տեսակցությունները մերձավոր ազգականների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ: Որոշ հիմնարկներում հերթական տեսակցությունը տրամադրվում է, երբ վերջին տեսակցությունից անցել է ոչ պակաս քան 15 օր: Նույնպես ընդունված կարգ է, երբ նոր հիմնարկ բերված կալանավորին առաջին 15 օրվա ընթացքում տեսակցություն չի տրամադրվում:

Տեսակցություններ ստանալու հետ կապված կան խնդիրներ «Գորիս» ՔԿՀ-ում: Կալանավորվածների մեծ մասը համուզված էր, որ կալանքի մեջ գտնվելու ընթացքում իրենք կարող են տեսակցել հարազատների հետ միմիայն քննիչի թույլտվությամբ:

Կային նաև կալանավորներ, ովքեր գիտեին օրենքի դրույթները, սակայն

կարծում էին, որ քննիչը արգելել է իրենց տեսակցությունները, չնայած ղեկավարության հավաստմամբ ոչ մի կալանավորի տեսակցություններն արգելելու մասին քննիչների կողմից ուղարկված գրություն հիմնարկում չի ստացվել: Սա վկայում է այն մասին, որ կալանավորները չեն տեղեկացվում իրենց իրավունքների մասին:

ՔԿ հիմնարկներում տեսակցության համար նախատեսված սենյակների քանակը և պայմանները տարբեր են: Ընդ որում, չկա որևէ չափանիշ ըստ որի հնարավոր լինի կանոնակարգել տեսակցության սենյակների քանակը ըստ հիմնարկում պահվող կալանավորների քանակի: Օրինակ, եթե «Աբովյանում» տեսակցության սենյակները գրեթե միշտ դատարկ են, ապա «Նուբարաշենում» մեծ հերթեր են գոյանում: Այդ պատճառով նաև սահմանափակվում է 3-ժամյա տեսակցության իրավունքը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են տվյալներ հիմնարկներում հարազատների հետ տեսակցությունների սենյակների քանակի և հնարավոր միաժամանակ անցկացվող տեսակցությունների քանակի վերաբերյալ:

	Երևան Կենտրոն	Նուբարաշեն	Աբովյան	Գյումրի	Գորիս	Վանաձոր	Վարդաշեն
Տեսակցության սենյակների քանակը	3	1	4	1	2	3	1
Մինչև 5 տարեկան երեխաների հետ տեսակցության սենյակներ	-	1	-	-	-	1	-
Հնարավոր միաժամանակ անցկացվող տեսակցությունների քանակը	3	7	4	3	1	2	5
Մինչև 5 տարեկան երեխաների հետ հնարավոր միաժամանակ անցկացվող տեսակցությունների քանակը	-	1	-	-	-	1	-

⁶ հոդված 17

«Երևան-Կենտրոն» հիմնարկում չկա տարաբաժանում քննչական և հարազատների հետ տեսակցությունների սենյակների միջև: Տեսակցությունների սենյակները ջեռուցվում են: Մենյակներում կան բազմոց, այթոռ, բազկաթոռ: Հատակները՝ մանրահատակ, պատերը՝ պաստառ, կան կախիչներ: Պատերին անգլերեն և հայերեն հայտարարություններ են փակցված, ուր բացատրվում է սենյակից դուրս գալու կարգը: Կա կանչի կոճակ: Մոտակայքում կա սանհանգույց:

«Աբովյան» հիմնարկում կա տարբեր չափերի չորս տեսակցության սենյակ: Ընդհանուր սենյակների վիճակը անմխթաբ է: Պատերին փակցված ոչ մի փաստաթուղթ չկա: Մենյակներից ոչ մեկում օդափոխության հարմարանք չկա: Մենյակներում ջեռուցում նախատեսված չէ: Երկու սենյակներում վարդակներ չկան, ինչը նշանակում է, որ այդ սենյակները հնարավոր չէ ջեռուցել նույնիսկ էլեկտրական սալիկներով: Սանհանգույց նախատեսված չէ:

«Գյումրի» ՔԿՀ-ի տեսակցության սենյակում հնարավոր է կազմակերպել միաժամանակ 3 տեսակցություն: Կալանավորների եւ այցելուների միջեւ կա միջնորմ, բայց երկու կալանավորվածի (երկու տարբեր այցելուի) միջեւ՝ ոչ: Դա ըստ էության հնարավոր էլ չէ, քանի որ տարածքը նեղ է (3մx2մ), ունի մեկական մուտք կալանավորվածների և հարազատների համար: Օդափոխության հարմարանք չկա: Հատակը բետոնից է: Մենյակներում փաստաթղթեր փակցված չեն: Սանհանգույցը մոտակայքում է, վերանորոգված, սակայն խոնավության պատճառով սալիկները թափվել են:

«Նուբարաշեն» ԿՊՎ-ի մեկուսարանում կա հարազատների հետ տեսակցության համար նախատեսված մեկ ընդհանուր սենյակ, որտեղ կարող են տեղի ունենալ միաժամանակ 7 տեսակցություն՝ իրարից առանձնացված ապակիներով, յուրաքանչյուր մասում կա մեկ փոքր երկաթե նստարան, որը ամրացված է կողքի պատին եւ բավականին բարձր է: Մենյակը չունի պատուհաններ և չի

օդափոխվում: Լուսավորությունը միայն արհեստական է: Հարազատների համար սանհանգույց մոտակայքում չկա:

«Վանաձոր» ՔԿՀ-ում տեսակցության համար նախատեսված է միջանցքի վերջում գտնվող տարածքը, որը մեկուսացված է մետաղյա ցանցով: Այնտեղ կան երկու սեղան եւ երկու նստարան: Առաստաղի տակ կա մեկ փոքր պատուհան, նույն տեղում գտնվող օդանցքները փողոց են դուրս գալիս: Ձմռան ամիսներին այդ տարածքում շատ ցուրտ է լինում:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում տեսակցության համար նախատեսված սենյակում կան չորս ապակեպատ խցեր, որոնք չեն օգտագործվում, և տեսակցությունները անց են կացվում միջանցքում: Մենյակը պատուհաններ չունի: Զուգարանը գտնվում է անմիջապես սենյակի կողքին:

Հարկ է նշել, որ «Նուբարաշեն» եւ «Վանաձոր» հիմնարկներում կան նաեւ մինչեւ 5 տարեկան երեխաների հետ տեսակցության հատուկ կահավորված սենյակներ (այնտեղ կան բազմոց, բազկաթոռ, խաղալիքներ, նկարներ):

Մեր կարծիքով երեխաների հետ տեսակցության սենյակների առկայությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ հատուկ կահավորված այդ սենյակները նվազեցնում են երեխայի մոտ սթրեսի առաջացման հնարավորությունը:

Ինչպես երեւում է վերը նկարագրվածից, չկա տեսակցության սենյակների կահավորման ընդհանուր մոտեցում: Այսինքն, որոշ հիմնարկներում հնարավոր է անմիջական շփում, մյուսներում՝ ոչ, ինչը ստեղծում է անհավասար պայմաններ տարբեր հիմնարկներում պահվող կալանավորվածների միջեւ:

Պետք է նաեւ փաստել, որ հիմնարկներում ստեղծված չեն համապատասխան պայմաններ օրենքով նախատեսված 3-ժամյա տեսակցությունների անցկացման համար:

Ինչ վերաբերում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տեսակցություններ արգելելու մեխանիզմին, ապա ՀՀ օրենսդրությունը դրա նկատմամբ

Ժամկետային պահանջ չի դնում, այսինքն մեկ որոշումով տեսակցություններն արգելվում են ամբողջ նախաքննության եւ դատաքննության ընթացքում: Այնինչ ԽԿԿ-ն նշում է, որ չնայած տեսակցությունների արգելումը քննչական մեկուսարանում կարող է իրոք անհրաժեշտ լինել նախաքննության տեսակետից, սակայն այդպիսի սահմանափակումը պետք է պարտադիր հիմնավորված լինի գործի նյութերով և մտցվի հնարավորին չափ կարճ ժամկետով⁷:

Մեր տեսակետից ճիշտ կլիներ օրենքում փոփոխություն կատարել, որպեսզի տեսակցության արգելումը կալանքի որոշման նման կիրառվի որոշակի ժամկետով՝ մեկ կամ երկու ամսով, եւ հետագայում անհրաժեշտության դեպքում երկարացվի: Ընդ որում, նախաքննության ընթացքում արգելքի որոշումը ընդունվի դատարանի կողմից՝ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչը թույլ կտար քննել միջնորդության հիմնավորվածությունը:

Հաճախակի են դեպքերը, երբ կալանավորներին չի թույլատրվում տեսակցություն ունենալ լրագրողների հետ, ինչը օրենքի խախտում է:

⁷ ԽԿԿ, Ուկրաինա այցելություն, 2000թ

Նամակագրություն

«Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն նամակագրությունը չի կարող արգելվել, եւ միայն դատարանի որոշմամբ կարող է թույլատրվել նամակագրության գրաքննություն: Կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման: Նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով եւ, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով⁸: Չնայած նամակագրության իրավունքից օգտվում են քչերը, քանի որ ՔԿՀ-ներում (բացի «Երեւան կենտրոնից») տեղադրվել են հեռախոսներ, եւ կալանավորվածները նամակագրության կարիք չեն ունենում, բայց պետք չէ այքաթող անել այն օրենսդրական բացերը, որոնք մեր կարծիքով առկա են այդ հարցում:

Ոչ Օրենքում, ոչ էլ Ներքին կանոնակարգում նախատեսված չեն մեխանիզմներ, որոնք ապահովեին նամակագրության գաղտնիությունը: Նամակագրության իրավունքից օգտվող կալանավորվածները նշում էին, որ նամակը բաց վիճակում հանձնվում էր անձնակազմին: Դրանից հետո նամակը, առանց կալանավորվածի ներկայության, սոսնձվում էր եւ ուղարկվում հասցեատիրոջը: Բացի այդ, պարզ է, թե արտաքին զննություն անցկացնողի մոտ նամակում արգելված առարկաների կամ նյութերի առկայության կասկածի առաջացման դեպքում որո՞նք են նրա հետագա գործողությունները: Մեր կարծիքով այդ խնդիրը կարելի է լուծել, եթե ամրագրվեր մեխանիզմ, որով նամակի արտաքին զննությունը կատարվի լուսացույցների միջոցով և կալանավորվածի

ներկայությամբ:

Ընդհանրապես հարց է ծագում՝ անհրաժեշտ է արդյոք կալանավայրից ուղարկվող նամակի արտաքին զննություն, քանի որ, ըստ Օրենքի, կալանավորվածի մոտ չեն կարող պահվել արգելված առարկաներ կամ նյութեր:

Նույնպես իրավական կարգավորման կարիք կա նամակագրության գրաքննության հարցում: Օրենքով նախատեսված է, որ այն կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը, սակայն նշված չէ, թե ինչ տեսակի գրաքննություն է իրականացվում: Եթե նամակում հայտնաբերվում է քննությանը խոչընդոտող տեղեկություն, ապա արդյոք այդ նամակը ընդհանրապես չի ուղարկվում հասցեատիրոջը, թե ուղարկվում է միայն անցանկալի տեղեկությունը անընթեռնելի դարձնելուց հետո: Արդյոք նամակի հեղինակը տեղեկացվում է գրաքննության արդյունքների մասին:

Բացի այդ, ճիշտ կլիներ Օրենքում փոփոխություն կատարել, որպեսզի նամակագրության գրաքննության թույլտվությունը տրվի որոշակի ժամկետով, միայն անհրաժեշտության դեպքում հետագայում երկարացվի:

⁸ Հոդված 17

Հեռախոսակապ

2002 թ-ից սկսվել են ՔԿՀ-ներում հեռախոսների տեղադրման աշխատանքները:

Կալանավորները օգտվում են հեռախոսից ըստ հիմնարկի վարչակազմի կազմած ժամանակացույցի:

Մեր կարծիքով անհրաժեշտություն կա ամրագրել հեռախոսակապից օգտվելու իրավունքի նվազագույն հաճախականությունը, ինչպես այն կարգավորված է տեսակցությունների հարցում:

Առանձնահատուկ ուշադրություն ենք ուզում դարձնել այն իրողությանը, որ միայն «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում դեռևս չի տեղադրված հետախոս: Հույս ենք հայտնում, որ այդ հարցը կլինի քրեակատարողական հիմնարկի վարչության ուշադրության կենտրոնում և շուտափույթ լուծում կստանա:

Հանձնություններ

Ըստ «Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի, կալանավորված անձը կարող է ստանալ ամսվա ընթացքում մինչև յոթանասուն կիլոգրամ հանձնույթ: Հանձնույթները կարող են ստացվել միանվագ կամ մաս-մաս⁹:

Որպես կանոն հանձնույթների ընդունման կետերը չեն ջեռուցվում:

«Երևան կենտրոն» ՔԿՀ-ում ընդունված կարգ է դարձել, որ հերթական հանձնույթը ընդունվում է նախորդ հանձնույթի ընդունման օրից ոչ պակաս, քան 7 օր հետո: Սա օրենքի խախտում է, և հաշվի առնելով, որ հիմնարկում չկան սառնարաններ, կալանավորների համար լուրջ խնդիրներ են առաջանում:

Գրադարաններ

Հիմնարկների գրադարանների գրքերի քանակը տարբեր է (300-ից-3000): Հիմնականում այնտեղ խորհրդային ժամանակներից մնացած գրքեր են, որոնք պահվում են ոչ համապատասխան պայմաններում: Նոր գրքեր ստացվում են խիստ հազվադեպ, այն էլ բարեգործական ճանապարհներով:

Հարկ է առանձնացնել «Գյումրի» ՔԿՀ-ը, ուր գրքերը դասավորված են այբբենական կարգով (հայերեն և ռուսերեն գրքերը առանձին), առկա են քարտազրացուցակ և առանձին մատյան, որոնցով կալանավորվածները կարող են ընտրել իրենց հետաքրքրող գրականությունը: Ցանկալի կլինի, որպեսզի գրադարանից օգտվելը հեշտացնելու համար մյուս հիմնարկները կիրառեին նույն պրակտիկան:

Անհրաժեշտ է միջոցներ հատկացնել գրադարանները նոր գրքերով համալրելու համար, ինչպես նաև գրադարաններում գրքեր պահելու համար համապատասխան պայմաններ ստեղծել:

⁹ Հոդված 22

Զբոսանք

Ըստ «Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի¹⁰, կալանավորվածների զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: Ընդ որում, կալանավորված կանայք եւ անչափահասները օգտվում են օրական երկու ժամից ոչ պակաս զբոսանքի իրավունքից:

Զբոսահրապարակներում տեղադրված են նստարաններ, իսկ պատերից մեկի վերևում անձրնից պաշտպանելու համար ամրացված է մոտ կես մետր լայնությամբ թիթեղի կտոր: Հիմնարկներում կան հետեւյալ քանակի զբոսահրապարակներ՝

«Երեւան կենտրոն»	6
«Գյումրի»	3
«Նուբարաշեն»	27
«Գորիս»	4
«Աբովյան»	1
«Վարդաշեն»	2
«Վանաձոր»	2

Չնայած «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կան բոլոր հնարավորությունները զբոսանքը կազմակերպելու համար, սակայն հիմնական խնդիրները առաջանում են հենց այս հիմնարկում: Հանգստյան օրերին զբոսանք ընդհանրապես չի տրվում, ինչը բացատրվում է այդ օրերին անձնակազմի անբավարար քանակով:

Բացի այդ, չնայած Ներքին կանոնակարգում նշված է, որ ԿՊ վայրերում պետք է լինեն համապատասխան տարածքներ *մարմնամարզության* համար, այդպիսի հնարավորություն մասամբ ստեղծված էր միայն «Գյումրի» ՔԿՀ-ի զբոսահրապարակներից մեկում (ուր կային հանտելներ եւ կշռաքար) եւ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի հիվանդանոցային բաժանմունքի զբոսահրապարակում (ուր կար ինքնաշեն պտտաձող) :

ԽԿԿ-ն առաջարկում է, որպեսզի ՔԿ հիմնարկներում գտնվող անձինք խցից դուրս գտնվեն օրական 8 ժամ: Հայաստանի ՔԿՀ-ներից ոչ մեկում չկան համապատասխան պայմաններ այս առաջարկությունն իրագործելու համար: Հաշվի առնելով ներկայումս հիմնարկներում ընթացող վերակառուցման աշխատանքները, անհրաժեշտ է պայմաններ նախատեսել խցից դուրս կալանավորվածների գտնվելու համար:

¹⁰ Հոդված 16

Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելում

Հայաստանում խոշտանգումների և դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները հիմնականում հանդիպում են ոստիկանական բաժանմունքներում, հետաքննության ընթացքում: Դրանք հիմնականում կիրառվում են ցուցմունք կորզելու նպատակով, որոշ դեպքերում նաև որպես պատիժ: 2005 թ. նոյեմբերի 30-ին ազատագրվածի մոր գրավոր դիմումի համաձայն այցելություն կատարվեց «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: Ազատագրվածի հետ հանդիպումից և առանձնագրույցից պարզվեց, որ նրան ծեծի են ենթարկել, ինչպես որ մայրն էր մեզ հաղորդել իր դիմումով: Նրան ծեծել էին երկու հոգու ներկայությամբ: Խփել էին ոտքերին ու ձեռքերին՝ ցուցմունք կորզելու նպատակով, հետո ստիպել էին ստորագրել մի փաստաթղթի տակ, որի բովանդակությանն ինքը ծանոթ չի եղել: Այդ ամենը տեղի է ունեցել ոստիկանությունում փաստաբանի (պետության կողմից տրամադրված) ներկայությամբ: Փաստաբանը ստորագրելուց հետո է միայն նրան ծանոթացրել հետաքննության բովանդակությանը: Կալանավորը հայտնեց նաև, որ երկու ամիսների ընթացքում միայն մեկ անգամ է հանդիպել իր փաստաբանի հետ, որ փաստաբանը գումար է պահանջել գործը լավ կատարելու համար:

«Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածը, որը վերաբերվում է ֆիզիկական ուժի կիրառմանը ՔԿՀ-ներում, ընդհանուր բնույթի էր, և հստակ չէր կանոնակարգում ուժի կիրառման համաչափությունը կապված իրավիճակից: Այդ հոդվածը 27.08.2005թ. ճանաչվել է ուժը կորցրած, որտեղ փաստորեն կանոնակարգված չէր ուժի կիրառումը ՔԿՀ-ներում:

Քրեակատարողական համակարգը Ար-դարադատության նախարարությանը փոխանցելուց հետո սպավորություն էր ստեղծվել, որ ՔԿՀ-ներում այլևս խոշ-

տանգումներ չեն կիրառվում: Այդ էին վկայում ինչպես տարբեր ՀԿ-ների կողմից անցկացված մոնիտորինգների հաշվետվությունները, այնպես էլ Խմբի 2004թ. դիտարկումների արդյունքները:

Սակայն 2005թ. ընթացքում Խումբը արձանագրեց դաժան վերաբերմունքի դեպքեր, հատկապես «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: Խմբի գնահատմամբ ազատագրվածների նկատմամբ խոշտանգումները և դաժան վերաբերմունքը կիրառվում են որպես պատիժ: Այս փաստերը քրեակատարողական հիմնարկի վարչության կողմից ներկայացվեցին, որպես օրենքի սահմաններում ուժի կիրառում:

Այսպես. 2005թ. մայիսի 4-ին ՀՀ ԱՆ ՔԿՎ Հասարակական դիտորդական խումբը ստացել էր ահազանգ այն մասին, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող ցմահ ազատագրվման դատապարտված Մ. Ենոքյանը ենթարկվել է բռնության:

Նույն օրը դիտորդական խմբի անդամներ Մ. Արամյանը, Ա. Դանիելյանը եւ

Մ. Բաղդասարյանը, այցելելով վերը նշված ՔԿՀ, հանդիպեցին հիմնարկի պետին, անվտանգության գծով պետի տեղակալին, սոցիալ-հոգեբանական ծառայության եւ բուժծառայության պետերին, ինչպես նաև ցմահ ազատագրվման դատապարտվածին:

Հիմնարկի պետի հետ հանդիպման ժամանակ նա հաստատեց Մ. Ենոքյանի նկատմամբ ուժի կիրառման փաստը:

Նրա խոսքերով, ապրիլի 30-ին բացահայտվել է Մ. Ենոքյանի կողմից փախուստի փորձի նախապատրաստումը, որի պատճառով հիմնարկի պետի կողմից նշանակվել է տույժ՝ 10 օր պատժախույց: Պատժախույց տեղափոխելուց առաջ Մ. Ենոքյանը չի ենթարկվել աշխատակցի պահանջին և թույլ չի տվել իրեն խուզարկել: Այդ պատճառով հիմնարկի պետի որոշմամբ Մ. Ենոքյանի նկատմամբ կիրառվել է հատուկ միջոց (ոետինն մահակ), որից հետո նա տեղափոխվել է պատժախույց: Միջադեպը արձանագրվել է, և դրա մասին

հայտնվել է համապատասխան մարմիններին:

Դապարարտյալի հետ հանդիպման ընթացքում պարզվեց, որ նրա նկատմամբ գործադրվել է ֆիզիկական ուժ, որի հետևանքով նրա դեմքի, քունքերի, քթի վրա առաջացել էին վերքեր, իսկ աջ աչքը և ձախ ականջը կապտած էին: Ենթյանի դեմքին առաջացած որոշ վնասվածքների արտաքին տեսքը վկայում էր, որ դրանք չէին կարող առաջանալ ռետինե մահակի հարվածներից: Բացի այդ, Ենթյանի մեջքին դեռևս հստակ երևում էին ռետինե մահակի հարվածներից առաջացած բազմաթիվ հետքերը: Վնասվածքներ կային նաև Ենթյանի ձեռքերին և ոտքերին, ձեռքերի դաստակների վերքերը ամենայն հավանականությամբ առաջացել էին այն պատճառով, որ հատուկ միջոց կիրառելու ժամանակ դատապարարտյալը եղել է ձեռնաշղթաներով:

Հանդիպումներից պարզվեց, որ հիմնարկի սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատակիցները թե՛ մինչ միջադեպը, թե՛ դրանից հետո ոչ մի հանդիպում չեն ունեցել դատապարտյալի հետ և որևէ աշխատանք նրա հետ չեն իրականացրել:

Ինչ վերաբերում է հիմնարկի բուժ-ծառայությանը, ապա ծառայության պետի խոսքերով, միջադեպից հետո Ենթյանին ցույց է տրվել բուժօգնություն (տրվել է ցավազրկող դեղորայք), սակայն ստացված մարմնական վնասվածքների վերաբերյալ արձանագրություն չի կազմվել: Նրա խոսքերով, ազատազրկվածների ՔԿՀ-ում գտնվելու ժամանակ ստացված և նրանց մարմնի վրա հայտնաբերված վնասվածքների մասին բժշկական արձանագրություն երբևէ չի կազմվում:

Մեր կողմից արձանագրված փաստերը ցույց են տալիս, որ տվյալ դեպքում, եթե նույնիսկ ընդունենք դատապարտյալի չենթարկվելը անձնակազմի պահանջին, ապա ակնհայտ է, որ ձեռնաշղթաներով դատապարտյալը չէր կարող ցուցաբերել այնպիսի դիմադրություն, որը սաստելու նպատակով անհրաժեշտ էր կիրառել այնպիսի հարկադրանք, որի

հետևանքով դատապարտյալի մոտ առաջացել են վերը նկարագրված վնասվածքները:

Սույն հարցով Խումբը գրավոր դիմել էր Արդարադատության նախարարին (տես հավելված 1), խնդրելով տալ հանձնարարական տեղի ունեցած բռնության փաստի վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, այդ թվում անհապաղ անցկացնել դատաբժշկական փորձաքննություն:

Ի պատասխան Խմբի ուղարկած նամակի, ստացվեց ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության պետ Վ. Ստեփանյանի ստորագրությամբ գրություն (Ե-4285), որում մասնավորապես նշվում էր, որ նամակի կապակցությամբ կատարվել է ուսումնասիրություն, որի «Ռետինե մահակի գործադրումը պայմանավորված է եղել ուղղիչ հիմնարկում օրինականությունը պահպանելու անհրաժեշտությամբ» (տես հավելված 2):

Սույն թվականի մայիսի 30-ին ՀՀ ԱՆ ՔԿՎ հասարակական դիտորդական խմբի անդամները լրացուցիչ այցելություն կատարեցին «Նուբարաշեն» ՔԿՀ և պարզեցին, որ պատասխանում նշված ուսումնասիրության ընթացքում Ենթյանի հետ ոչ ոք չի հանդիպել: Ինչ վերաբերում է բժշկական քարտին, ապա այնտեղ գրանցված էին միայն ս.թ. ապրիլի 30-ին, մայիսի 3-ին և 5-ին Ենթյանի արյան ճնշման արդյունքները և որոշակի բուժօգնության ցուցաբերման փաստը: Խմբի անդամների կողմից ապրիլի 30-ին արձանագրված մարմնական վնասվածքների մասին ոչ մի գրառում չկար: Ենթյանը բողոքում էր կողերի ցավերից, ինչի կապակցությամբ հիմնարկի բուժանձնակազմը կատարել էր ռենտգեն հետազոտություն, որի արդյունքների մասին ոչինչ հայտնի չէր դատապարտյալին:

ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության պետ Վ. Ստեփանյանի պատասխանը համոզիչ չէր, որ Ենթյանի նկատմամբ ուժի կիրառումը եղել է համաչափության սահմաններում: Մեր կարծիքող այն կիրառվել է որպես պատիժ:

Նույն այցելության ժամանակ Խումբը պարզեց նաև, որ 2005թ. ապրիլի 12-ին մեկ այլ ցմահ ազատազրկման դատապարտված

Սողոմոն Քոչարյանի հանդեպ ևս ուժ է կիրառվել հիմնարկի աշխատակազմի կողմից: Ս. Քոչարյանը բողոքեց, որ դեպքից հետո, հավանաբար վնասվածքների արդյունքում, ունի ներքին արյունահոսություն, ինչպես նաև վնասվել է ձախ ձեռքը (չի բացառվում կոտրվածք): Անգեն աչքով նկատելի էր ձեռքի դաստակի հատվածում այտուցվածություն: Նույն օրը, Ս. Քոչարյանի ասելով, իրեն տեղափոխել են պատժախուց, որը հաստատվեց նաև հիմնարկի պետի կողմից: Սակայն Քոչարյանի անձնական գործում բացակայում էր նրա պատժախուց տեղափոխելու մասին արձանագրությունը: Ինչ վերաբերում է բժշկական քարտին, ապա ըստ դրա Քոչարյանը երբևիցե ոչ մի բուժօգնություն չէր ստացել: Հետագայում, չնայած հիմնարկի պետի Խմբին տված բազմաթիվ խոստումներին, Քոչարյանը այդպես էլ ռենտգեն հետազոտության չենթարկվեց (տես հավելված 3): ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության պետ Վ. Ստեփանյանի պատասխանում գրված էր, որ «Դատապարտյալների նկատմամբ կիրառված հատուկ միջոցների վերաբերյալ Ձեր 05.05.2005թ. թիվ 07 նամակում բարձրացված հարցերին մեր կողմից 25.05.2005թ. թիվ Ե-4285 գրությամբ տրվել է սպառիչ պատասխան» (տես հավելված 4): Այսպիսով, Խմբի կողմից բարձրացված դատապարտյալ Քոչարյանի նկատմամբ կիրառված բռնության, ինչպես նաև առանց արձանագրելու նրան պատժախուցում պահելու մասին հարցերը մնացել են անպատասխան:

Օգոստոսի 18-ին դիտորդական խմբի նախագահ Թեմիկ Խալափյանը և խմբի անդամ Միքայել Արամյանը ահագանգի հիման վրա այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Այնտեղ պահվում էր «Հիվանդանոց դատապարտյալների համար» ՔԿՀ-ում հսկիչների կողմից ծեծի ենթարկված կալանավոր Արտյոմ Ավագյանը: Վերջինս առանձնագրույցի ժամանակ պնդել է, որ հսկիչներն իրեն ծեծել են ռետինե մահակով և երկաթյա ամրանով: Տուժողի գլխին և մարմնի այլ մասերում դի-

տորդները տեսել են խոշտանգման հետքեր:

Այդ ժամանակ հարևան սենյակում հիմնարկի աշխատակիցների կողմից ծեծի է ենթարկվել մեկ այլ կալանավոր: Կալանավորի գոռոցներին արձագանքելով, Ս. Արամյանը մոտեցել է դռանը և տեսել, թե ինչպես են ոտքերով ծեծում նրան: Արամյանը փորձել է տեղեկանալ, թե ինչ է կատարվում, ինչը, սակայն, խիստ դժգոհությամբ է ընդունվել հիմնարկի անվտանգության ծառայության ավագ մասնագետ Վ. Օհանյանի կողմից, որը, իմանալով Դիտորդական խմբի առաքելությունն ու այցելության նպատակը, պահանջել է Ս. Արամյանից հեռանալ հիմնարկից, ասելով՝ «Դու ով ես, որ խառնվում ես, լավ եմ անում, ծեծում եմ»:

Միջադեպը քննարկվել է պետի՝ Ա. Սարգսյանի առանձնասենյակում: Վերջինս խոստացել է ծառայողական քննություն անցկացնել և գրավոր պատասխանել մեզ, ինչի մասին մինչև այսօր մեզ տեղեկատվություն չի տրվել:

Այս միջադեպը Խմբի երկու տարվա աշխատանքի ընթացքում միակ դեպքն է, որ դիտորդական գործունեությունն իրականացնելիս խոչընդոտներ հարուցվեցին (տես հավելված 5, 6):

Օգոստոսի 19-ին հացադուլ հայտարարած Ռ. Սարգսյանի հետ հանդիպումից առաջ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետ Ա. Սարգսյանը հայտնել է խմբի անդամներ Ս. Բաղդասարյանին և Ա. Սաքունցին, որ թույլ չի տալիս լուսանկարել: Ավելին, այցելության ավարտից հետո հիմնարկի պետը դիտորդներին հնարավորություն չի տվել նաև ծանոթանալ կալանավորված անձանց (Ռուդիկ Սարգսյանի, Մուսա Սերոբյանի և Արայիկ Զայանի) առողջության մասին բժշկական քարտերին, չնայած կար վերջիններիս գրավոր համաձայնությունը, որը գտնվում էր ՔԿՀ պետի մոտ: ՔԿՀ-ի պետն իր գործողությունները հիմնավորել է ուղղակիորեն հայտարարելով՝ «Ինձ հրահանգված է չթույլատրել»:

«Առավոտ» թերթի 2006-ի հունվարի 11-ի համարում հրապարակվեց հետևյալ տեղեկատվությունը:

«Առավոտը» նախորդ օրը ահագանգ էր ստացել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում դաժան ծեծի էին ենթարկվել թիվ 88 խցի դատապարտյալներ Արամ Պետրոսյանը, Հակոբ Խաչատրյանը եւ Արտակ Ալեքյանը: Նշենք, որ նրանք ցմահ ազատազրկվածներ են: Արդարադատության նախարարության մամուլ քարտուղար Արա Մաղաթեյանը «Առավոտին» հայտնել է, որ սկսվել է ծառայողական քննություն: Թերթը գրում է, որ դեկտեմբերի 23-ին, ժամը 17:30-ի սահմաններում 88-րդ խցում կատարվել է արտահերթ խուզարկություն. որի ժամանակ զուգարանի հետին մասում հայտնաբերվել է լուսանկարում պատկերված սույն թաքստոցը: Ըստ ՔԿՀ մեր աղբյուրների, այնտեղից հայտնաբերվել էր 3 հատ պոլիէթիլենային շշով սպիրտ, 61 հատ նրբասողոց, 4 ջարդած սողոցի մասեր, 4 հատ ամրան, կես լիտրանոց շշերով ավազ, ցեմենտ, գաջ, մետաղյա լարեր, ինքնաշեն պարաններ: Ալեքյանը, Խաչատրյանը և Պետրոսյանը փորձում էին թույլ չտալ հայտնաբերվածը հանել խցից: ԱՆ աշխատակիցները գործադրել են Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ: Մեր տեղեկություններով, ցմահ դատապարտյալները հրաժարվել են անգամ գրավոր և բանավոր բացատրություններ տալ: Հիշեցնենք, որ անցյալ տարվա ապրիլի 26-ին նույն դատապարտյալները գտնվել էին 85-րդ խցում և դարձյալ անձնական խուզարկության ընթացքում նրանց մոտ հայտնաբերվել էին 8 հատ նրբասողոց, ինքնաշեն սողոց, պարան և այլ իրեր: Տեղազնության ժամանակ պարզվել էր, որ կտրվել են խցի երեք վանդակաճաղերը: Ծառայողական քննության արդյունքում անցյալ տարի այն որակվել էր փախուստի փորձ, հարուցվել էր քրեական գործ և ցմահ դատապարտվածները ստացել էին երկու տարի պատժաչափ: Հասարակական դիտորդական խմբի անդամներ Միքայել Բաղդասարյանը և Ավետիք Իշխանյանը հունվարի 19-ին այցելեցին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: Առանձնագրույցի ժամանակ դատա-

պարտյալները հաստատեցին «Առավոտ» թերթում տպագրված ազատազրկվածների նկատմամբ կիրառված բռնությունների փաստերը:

Խումբը այս փաստերի կապակցությամբ դիմել էր ինչպես Արդարադատության նախարարին, այնպես էլ ՀՀ Գլխավոր դատախազին: Գլխավոր դատախազությունը ոչ միայն չպատասխանեց Խմբի նամակին, այլև նրա կողմից ոչ մի արձագանք չեղավ դեպքի կապակցությամբ: Ինչ վերաբերում է ՀՀ Արդարադատության նախարարության վերահսկողության վարչությանը, որը դեպքերի կապակցությամբ պետք է կատարեր ծառայողական քննություն, ապա նման քննության ընթացքում վարչության աշխատակիցները նույնիսկ չեն այցելել ՔԿՀ, չեն հանդիպել տուժած դատապարտյալներին:

Շարադրվածից հետևում է, որ չեն պահպանվել ՄԱԿ-ի «Խոշտանգումների եվ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» Կոնվենցիայի 12 և 13 հոդվածների, ինչպես նաև «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները.

ՀՈԴՎԱԾ 12

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ եւ անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, թե խոշտանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում:

ՀՈԴՎԱԾ 13

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի ամեն մի անձ, ով պնդում է, թե ինքը ենթարկվել է խոշտանգումների, այդ պետության իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում ունենա տվյալ պետության իրավասու իշխանություններին բողոք ներկայացնելու եւ նրանց կողմից նմանօրինակ բողոքը անհապաղ եւ անաչառ կերպով հետաքննելու

իրավունք: Ձեռնարկվում են միջոցներ, ապահովելու համար հայցվորի եւ վկաների պաշտպանությունը նրանց բողոքի կամ վկայական ցուցումների հետ կապված վատ վերաբերմունքի կամ ահաբեկման ամեն մի ձեռից:

Նմանատիպ դեպքերով հայտնի են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևյալ որոշումները՝ Ասենովն ընդդեմ Բուլղարիայի, Վեզնեդարովն ընդդեմ Թուրքիայի, Այդինը ընդդեմ Թուրքիայի, Պոլտորացկին ընդդեմ Ուկրաինայի (տես հավելված 7):

Այսպիսով, դեռևս վաղ է խոսել քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերացված լինելու մասին:

Առաջարկություններ

1. «Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքում հստակ նշել՝

ա. ուժի կիրառման համաչափության սահմանումները,

բ. հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը, դեպքերը և ձևերը:

2. Ծառայողական քննությունը կրի ոչ ձևական բնույթ:

3. Արդյունավետ դարձնել դատախազական վերահսկողությունը:

4. Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բացահայտման դեպքերում կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ իրավախախտումների նկատմամբ:

5. Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար կազմակերպել համապատասխան վերապատրաստում:

6. Կալանքի տակ գտնվող անձինք, որոնց դեմ կիրառվել է ֆիզիկական ուժ, պետք է իրավունք ունենան անմիջապես հետազոտվել,

իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուժում ստանալ: Ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է գրանցվի:

7. Ազատագրված անձը պետք է գրավոր տեղեկացվի իր դեմ կիրառվող պատժամիջոցի մասին, նրան պետք է հնարավորություն տրվի արտահայտել իր տեսակետը, բողոք ներկայացնել համապատասխան մարմիններին:

ՔԿՀ-ների անձնակազմը և նրանց խնդիրները

Քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի անդամների հետ հարցազրույցների ժամանակ առաջ քաշվեցին անձնակազմին վերաբերող մի շարք խնդիրներ:

Առաջնային խնդիրը, որը նշվեց բոլոր հիմնարկներում անխտիր, աշխատավարձն է: Հաշվի առնելով ՔԿՀ-ներում աշխատանքի բնույթը, աշխատակիցների կարծիքով այն պիտի լինի առնվազն 200 հազ. դրամ: Աշխատավարձի բարձրացումը կնպաստի համակարգում տեղ գտած կոռուպցիայի նվազեցմանը: Խնդիրների շարքում հիմնարկների վարչակազմի կողմից նշվում էր նաև, որ անձնակազմը փաստացի ոչ մի արտոնությունից չի օգտվում, չնայած «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքով քրեակատարողական հիմնարկների ծառայողների համար նախատեսված են մի շարք արտոնություններ:

Քրեակատարողական հիմնարկների աշխատողները չեն ապահովվում տրանսպորտով: Ծառայողական տրանսպորտային միջոց հիմնարկներից ոչ մեկը չունի, իսկ հասարակական տրանսպորտից օգտվելու արտոնությունները գործնականում կիրառելի չեն, քանի որ այդ տրանսպորտի գերակշիռ մասը մասնավոր է եւ աշխատողների կողմից վկայականների ներկայացումը խիստ բացասական էմոցիաներ է առաջացնում վարորդների մոտ:

Ինչ վերաբերում է անձնակազմին համազգեստով ապահովելու հարցին, ապա նախատեսվում է փոփոխության ենթարկել քրեակատարողական հիմնարկների աշխատողների համազգեստը, բայց դեռ որոշված չէ ինչպիսին է այն լինելու: Այդ պատճառով նոր համազգեստ դեռևս չի կարվում, իսկ հինը այլևս չի հատկացվում աշխատակազմին: Վերջիններս ստիպված են

սեփական միջոցներով համազգեստ ձեռք բերել:

Քրեակատարողական հիմնարկները իրենց աշխատողներին սննդով չեն ապահովում: Բացի այդ, հիմնարկներում չկան անձնակազմի համար նախատեսված ճաշարաններ: Փաստորեն 24 ժամով հերթապահության անցնող աշխատողը ստիպված իր հետ է բերում մի ամբողջ օրվա համար նախատեսված սննունդ եւ սնվում է անմիջապես աշխատատեղում: Բացառությամբ է կազմում «Նուբարաշեն» ԿՊՎ-ն, ուր վարչական շենքում հիմնարկը իր ուժերով կառուցել է ճաշարան անձնակազմի համար, որտեղ նրանք կարող են ինքնուրույն կերակուր պատրաստել եւ սնվել:

Աշխատակազմի սենյակների պայմանները նույնպես անմիջապես են: Սա վերաբերում է հատկապես կալանավորվածների հետ անմիջականորեն աշխատող կազմին, որոնց սենյակների վիճակը գրեթե նույնն է, ինչ եւ կալանավորվածների խցերինը:

Քրեակատարողական հիմնարկների աշխատողները, իրենց իսկ կարծիքով, վերապատրաստման կարիք ունեն: Նրանց կարծիքով՝ «Մոտեցումները պետք է նորացվեն, պետք է փոխվի կալանավորվածին վերաբերվելու սկզբունքը»: Հարկ է նշել, որ Քրեակատարողական վարչությունը կազմակերպում է կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ անգնակազմի համար:

Հսկիչները ֆիզիկական պատրաստվածության ոչ մի հատուկ դասընթաց չեն անցնում, ինքնապաշտպանության սկզբունքներին ծանոթ չեն:

Քրեակատարողական հիմնարկներում առկա է նաև աշխատակազմի համալրվածության խնդիր:

Ցավալի է, որ Հայաստանի կառավարությունը, կատարելով քրեակատարողական համակարգում ազատագրվածների իրավունքների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կառույցների առջև ստանձնած պարտավորությունները, անու-

շաղրության է մատնում այդ համակարգի աշխատողների աշխատանքային անարժանապատիվ պայմանները: Բացի այդ, աշխատանքային եւ սոցիալական պատշաճ պայմանների ստեղծումը հնարավորություն կստեղծի համալրել աշխատակազմը որակյալ մասնագետներով, ինչը իր հերթին կնպաստի կալանավորվածների իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանությանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄՔԻ 2005ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2005թ-ի գործունեության հաշվետվությունը քննարկվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունում: Հաշվետվությունում նշված հարցերի վերաբերյալ ստորև ներկայացվում են ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները: Մեկնաբանությունները տրված են հիմնականում տարակարծիք հարցերի առնչությամբ:

<p align="center">ԽՄՔԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Խցերում տեղադրել վարդակներ, ինչը թույլ կտա կալանավորվածներին հրաժարվել վնասակար չոր սպիրտ այրելու անհրաժեշտությունից, ու նաև ստեղծել հեռուստացույցներ և ռադիոընդունիչներ ունենալու հնարավորություն: • Ինչպես բոլոր ՔԿՀ-ներում, այս հիմնարկում ևս տեղադրել քարտային հեռախոս: • Թույլ տալ կալանավորներին ստանալ իրենց նախընտրած մամուլը: • Խցերում մեկուսացնել զուգարանները: 	<ul style="list-style-type: none"> • Հիմնարկի խցերում տեղադրվել են վարդակներ և հեռուստացույցներ: • Քարտային հեռախոս տեղադրելու համար կատարվում են աշխատանքներ: • Կալանավորված անձանց արգելված չէ ստանալ իրենց նախընտրած մամուլը: • Խցերում զուգարանները մեկուսացնելու համար կատարվել է նախահաշվարկ, որին կհաջորդեն շինարարական աշխատանքները:

<ul style="list-style-type: none"> • Լողարանում ավելացնել ցնցուղների քանակը: 	<ul style="list-style-type: none"> • Լողարանում ցնցուղների քանակը ավելացվել է:
---	---

<p align="center">ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՆՈՒՔԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Հիմնարկում չի պահպանվում նախատեսված օրական մեկ ժամյա զբոսանքը: • Արձանագրվել են դեպքեր, երբ ազատագրվածների կողմից ուղարկված նամակները չեն հասել հասցեատերերին: Մերժվել են լրագրողների հետ հանդիպելու նրանց պահանջները: • Կարանտինային խցերի կալանավորվածները ապահովված չեն անկողնային սպիտակեղենով: • Ջրոսահրապարակներում չկա սպորտով զբաղվելու հնարավորություն: 	<ul style="list-style-type: none"> • Ընդունելի է: Ներկայումս անձնակազմի սակավության պատճառով անհնարին է հիմնարկում պահվող բոլոր կալանավորված անձանց ամենօրյա զբոսանք տրամադրել: Առավելագույն հնարավորությունները օգտագործվում են կալանավորված անձանց զբոսանքի իրավունքը ապահովելու համար: Մոտ ապագայում խնդիրն ամբողջությամբ լուծված կլինի: • Հիմնավոր չէ, նման դեպքեր չեն արձանագրվել: <ul style="list-style-type: none"> • Պատասխանատու ծառայություններին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում լուծել կարանտինային բաժանմունքում պահվող անձանց անկողնային սպիտակեղենով ապահովելու հարցը: Խնդիրը լուծված է: • Ջրոսահրապարակների չափերի փոքր լինելու պատճառով կալանավորվածները չեն կարողանում զբաղվել սպորտային խաղե-

<ul style="list-style-type: none"> • 2005-ի ընթացքում Խումբը մի շարք ահազանգեր է ստացել հիմնարկի վարչակազմի կողմից ազատագրկվածների նկատմամբ կիրառվող բռնությունների վերաբերյալ: Դրանց ուսումնասիրության ոչ լիարժեք լինելը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: <p>Առաջարկություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ապահովել կալանավորների օրական մեկ ժամյա զբոսանքը: 2. Կարանտինում պահվող կալանավորվածներին ապահովել անկողնային սպիտակեղենով: 3. Բարելավել սննդի որակը: 4. Ապահովել նամակագրության իրավունքն ու գաղտնիությունը: 	<p>րով: Սակայն զբոսահրապարակներում տեղադրվում են մարգասաքեր:</p> <ul style="list-style-type: none"> • Խմբի կողմից նշված «խոշտանգումների փաստերի» վերաբերյալ քրեակատարողական վարչությունը ժամանակին իր մեկնաբանությունները ներկայացրել է: Բոլոր վիճահարույց դեպքերով նշանակվել են համապատասխան ծառայողական քննություններ, որոնք իրականացվել են օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: <p>Առաջարկությունների վերաբերյալ</p> <ol style="list-style-type: none"> 1. Միջոցներ են ձեռնարկվում առավելագույնս ապահովելու ուղղությամբ: 2. Պատասխանատու ծառայություններին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում լուծել կարանտինային բաժանմունքում պահվող անձանց անկողնային սպիտակեղենով ապահովելու հարցը: 3. Ներկայումս ձեռնարկվում են առավելագույն միջոցներ սննդի որակը բարելավելու ուղղությամբ: 4. Կալանավորված անձանց և դատապարտյալների նամակագրության իրավունքն ու գաղտնիությունը ապահովված է:
<p>ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԳՅՈՒՄՐԻ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Տեղանքը առատ է ստորգետնյա ջրերով, ինչի պատճառով հիմնարկում կատարվող շինարարական աշխատանքները անարդյունավետ են: 	<ul style="list-style-type: none"> • Հիմնարկի ստորգետնյա ջրերի հեռացման համար համապատասխան համաձայնություն էր ձեռք բերվել «Կարմիր

• Հիվանդներին ճիշտ ժամին և ճիշտ քանակով դեղամիջոցներ չապահովելու արդյունքում առողջանալու հավանականությունը խիստ ցածր կլինի:

• Հիմնարկում տեսակցության սենյակը շատ փոքր է: Տեսակցությունների համար անհրաժեշտ է հատկացնել այլ տարածք:

• Խցերում ռադիոցանցը չէր գործում:

Առաջարկություններ

1. Լուծել հիմնարկի դրենաժային համակարգի կառուցման հարցը:

Խաչ» միջազգային կազմակերպության հետ, սակայն կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ նմանօրինակ աշխատանքներն անարդյունավետ կլինեն: Այդ իսկ պատճառով խնդիր է դրվել ապագայում հրաժարվել հիմնարկի առկա շինությունից: Վերոհիշյալից ելնելով, կապիտալ շինարարական աշխատանքներ չեն իրականացվում:

• Խմբի այցելության պահին հիմնարկում հաշվառման մեջ են եղել բոքսախտից բուժված երեք դատապարտյալներ, որոնք գտնվել են բժշկի ամենօրյա հսկողության տակ: Հիվանդության սրացում այդ դատապարտյալների մոտ չի նկատվել: Հիմնարկն ապահովված է տուբերկուլյոզի և ընդհանուր պրոֆիլի հիվանդությունների բուժման համար անհրաժեշտ դեղորայքով:

• Կարճատև տեսակցությունների սենյակը հնարավորինս մեծացվել է: Ստեղծվել է երկարատև տեսակցությունների սենյակ՝ սանհանգույցով, մնջասենյակով և խոհանոցով: Սակայն անընդհատ խոնավության պատճառով այն կորցրել է իր տեսքը և վերանորոգման կարիք ունի:

• Բոլոր խցերը ռադիոֆիկացնելու նպատակով աշխատանքներ են իրականացվում Գյումրիի տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ համաձայնություններ ձեռք բերելու ուղղությամբ:

Առաջարկությունների վերաբերյալ

1. Զանի որ ապագայում նախատեսվում է լուծարել «Գյումրի» քրեակատարողական հիմնարկը, այնտեղ շինարարական

<p>2. Տեսակցությունների համար հատկացնել նոր սենյակ:</p> <p>3. Խցերն ապահովել ռադիոյով:</p>	<p>աշխատանքների իրականացումը կլինի ոչ արդյունավետ:</p> <p>2. Առաջիկայում հիմնարկի լուծարման պատճառով նպատակահարմար չէ:</p> <p>3. Ձեռնարկվում են միջոցներ:</p>
--	---

<p>ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱԲՈՎՅԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
--	---

<ul style="list-style-type: none"> • Առաջին հարկի խցերը չափազանց խոնավ են, և այնտեղ կալանավորվածներ պահելը ցանկալի չէ: Խցային պայմանները հեռու են բարվոք լինելուց: Չի պահպանվում մեկ անձի համար 4 քմ. տարածքի չափաբաժինը: Խցերում ջրատար համակարգը ծայրաստիճան մաշված է: Խցերի պատուհանների ճաղավանդակները այնպես են տեղադրված, որի պատճառով կալանավորվածները չեն կարողանում բացել պատուհանները: Մեկ զբոսահրապարակի պայմաններում չի կարող ապահովվել օրենքի պահանջները: • Գիշերային ժամերին խցերում հոսանքը անջատվում է, ինչի հետևանքով կալանավորվածները մրսում են: • Վարչակազմը նախաձեռնություն չի ցուցաբերում կանանց լոգանքն ավելի հաճախ կազմակերպելու ուղղությամբ: Հիմնարկը պետության կողմից կանանց համար նախատեսված հիգիենիկ պարագաներ չի 	<p>աշխատանքների իրականացումը կլինի ոչ արդյունավետ:</p> <p>2. Առաջիկայում հիմնարկի լուծարման պատճառով նպատակահարմար չէ:</p> <p>3. Ձեռնարկվում են միջոցներ:</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <ul style="list-style-type: none"> • Դիտողությունները ընդունելի են: Հիմնարկի կալանավորվածների պահելու վայրի (ԿՊՎ) մասնաշենքը գտնվում է վթարային վիճակում: Մասնաշենքի վերանորոգումը նպատակահարմար չէ, անհրաժեշտ է նորը կառուցել՝ համապատասխան չափանիշներով, որը հնարավորություն կստեղծի ապահովել կալանավորվածների զբոսանքը, խցերի օդափոխությունը, ջրամատակարարումը և սանհանգույցների նորմալ շահագործումը: ԿՊՎ-ի մասնաշենքի 2-րդ - հարկում ավելի մեծ թվով կալանավորվածներ են պահվում, իսկ 1-ին հարկը չի կարող ընդհանրապես չօգտագործվել՝ հատուկ քանակակազմի թվի աճի պատճառով: Համեմատական առումով խոնավ խցերի օգտագործումը դադարեցված է: • Էլեկտրաէներգիայի մատակարարումը բոլոր խցերում կատարվում է շուրջօրյա: • Առաջիկայում կստեղծվեն լրացուցիչ հնարավորություններ կանանց լոգանք ընդունելու հաճախականությունն ապահովելու ուղղությամբ:
---	---

ստանում:

• Տեսակցության սենյակները վերանորոգման կարիք ունեն: Սենյակներում վարդակներ չկան: Հանձնուքի փոխանցման և տեսակցությունների տրամադրման կարգի վերաբերյալ փաստաթղթեր փակցված չեն:

• Խմբի այցելություններից մեկի ժամանակ գրանցվել է դեպք, երբ մի քաղաքացու՝ իր մանկահասակ երեխայի հետ հանձնուք փոխանցելու համար երկար ժամանակ հերթում սպասելուց հետո հայտարարել են, որ աշխատանքային ժամն ավարտվել է և հանձնուքներ այլևս չեն ընդունվում:

Առաջարկություններ

1. Առաջնահերթության կարգով վերանորոգել կալանավորվածներին պահելու մասնաշենքը:

2. Հաշվի առնելով այն, որ խցերի ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերի միջոցով, բացառել հոսանքի անջատումները:

3. Կանանց համար ավելացնել լոգանք ընդունելու հնարավորությունները:

4. Կանանց ապահովել հիգիենիկ պարագաներով:

• Ընդունելի է: Երկարատև տեսակցության սենյակներ, ինչպես նաև տեսակցության եկած անձանց համար սպասասրահ կարելի է կառուցել միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Սենյակներում տեղադրվել են վարդակները, փակցվել են տեսակցությունների տրամադրման, հանձնուքների փոխանցման կարգի և այլ հրահանգների վերաբերյալ փաստաթղթերը:

• Այս փաստը իրականությանը չի համապատասխանում, ավելին՝ տեսակցության եկած անձանց նկատմամբ մշտապես ցուցաբերվել է մարդասիրական վերաբերմունք:

Առաջարկությունների վերաբերյալ

1. Մասնաշենքի վերանորոգելը նպատակահարմար չէ, անհրաժեշտ է նորը կառուցել: Միջոցներ են ձեռնարկվում հնարավորինս բարելավելու ուղղությամբ:

2. Էլեկտրաէներգիայի մատակարարումը բոլոր խցերում կատարվում է շուրջօրյա:

3. Առաջիկայում կստեղծվեն լրացուցիչ հնարավորություններ կանանց լոգանք ընդունելու հաճախականությունն ապահովելու ուղղությամբ:

4. Կանանց հիգիենիկ պարագաներ ձեռք բերելու ուղղությամբ

<p>5. Հարազատների համար ստեղծել սպասասրահ, որտեղ պետք է փակցված լինեն անհրաժեշտ փաստաթղթերը:</p> <p>6. Վերանորոգել տեսակցության սենյակները: Մոտակայքում կառուցել զուգարան, որից կալանավորվածները և նրանց հարազատները կարողանան ազատորեն օգտվել:</p> <p>7. Ավելացնել զբոսահրապարակների քանակը:</p> <p>8. Դադարեցնել առաջին հարկի խցերի օգտագործումը:</p>	<p>արդեն իսկ ձեռնարկվել են միջոցներ, 2006-ի երկրորդ կիսամյակի ընթացքում դրանք կտրամադրվեն կին դատապարտյալներին:</p> <p>5. Սպասասրահ հնարավոր է կառուցել միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Սենյակներում, փակցվել են տեսակցությունների տրամադրման, հանձնուքների փոխանցման կարգի և այլ հրահանգների վերաբերյալ փաստաթղթերը:</p> <p>6. Տեսակցության մեկ սենյակ վերանորոգվել է, մյուս սենյակները՝ մասնակիորեն, տեղադրվել են բացակա վարդակները: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում տեսակցության սենյակների մոտակայքում կկառուցվի նաև սանհանգույց:</p> <p>7. Ընդունելի է, սակայն ներկա շենքային պայմանները թույլ չեն տալիս ավելացնել զբոսահրապարակների քանակը:</p> <p>8. Առաջին հարկը չի կարող ընդհանրապես չօգտագործվել՝ հատուկ քանակակազմի թվի աճի պատճառով, իսկ համեմատական առումով խոնավ խցերի օգտագործումը դադարեցված է:</p>
<p align="center">ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎԱՆԱՉՈՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<p>• Նման պայմաններում մարդկանց պահելը կարելի է որակել որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում:</p>	<p>• 2005-ի ընթացքում սկսվել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի նոր շենքի կառուցումը և ըստ</p>

<ul style="list-style-type: none"> • Հիմնարկում ներքին ռադիոցանց գոյություն չունի: • Պատժախցում և մոլեգնախցում փակցված չէր կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների և պարտականությունների մասին թերթիկը: 	<p>պայմանագրի մինչև 2006-ի դեկտեմբեր ամիսը այն շահագործման կհանձնվի:</p> <ul style="list-style-type: none"> • Հիմնարկում ներքին ռադիոցանց գոյություն ունի, սակայն Վանաձորի քաղաքային ռադիոցանցը երկար ժամանակ է չի գործում: Միջոցներ են ձեռնարկվում Էլեկտրական ռադիոընդունիչներ ձեռք բերելու ուղղությամբ: • Պատժախցերում և մոլեգնախցում կալանավորված անձանց իրավունքների և պարտականությունների մասին թերթիկի փակցները օրենսդրությամբ նախատեսված չէ:
<p align="center">ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎԱՐԴԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Ներկայացվել են հիմնարկում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Դիտողություններ չկան: 	
<p align="center">ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԳՈՐԻՍ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Խցերի մի մասը անմխիթար վիճակում է, ջրատար խողովակները խիստ հնացած: • Խցերում զուգարանները մեկուսացված չեն: Կալանավորվածները 	<ul style="list-style-type: none"> • Բոլոր դիտողությունները ընդունելի են: Բնակելի գոտին, բոլոր խցերը (բացառությամբ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց խցերից), առաջին հարկի բաղնիքը ընդհանուր շին. վերանորոգման կարիք ունեն: • Հնարավորության դեպքում կփոխվեն նաև ջրատար

բողոքում էին փայտոջիլների առկայությունից:

- Էլեկտրական հոսանքը տրվում էր սահմանափակ գրաֆիկով:

- Պատժախցերի չափերը չեն համապատասխանում միջազգային չափանիշներին:

- Կալանավորվածներն իրենց իրավունքների մասին տեղեկացված չեն:

- Հիմնարկում դատապարտյալների բարոյահոգեբանական վիճակը ընդհանուր առմամբ ծանր է: Դատապարտյալները չունեն սպորտային խաղերով զբաղվելու հնարավորություն:

Առաջարկություններ

- Ջեռուցման համակարգը միացնել՝ ելնելով խցերում անհրաժեշտ ջերմաստիճան ապահովելու անհրաժեշտությունից:

- Պատժախցերն այլևս չօգտագործել:

խողովակները և կմեկուսացվեն զուգարանները: Խցերում պարբերաբար իրականացվում են միջատների դեմ ախտահանիչ միջոցառումներ:

- Էլ. էներգիայի սահմանափակ քանակը ավելացնելու դեպքում կապահովվի շուրջօրյա էլ. մատակարարում:

- Ընդունելի է, սակայն պատժախցերը չօգտագործելն առայժմ հնարավոր չէ: Կարանտինային խուցը փոխվել է:

- Կալանավորված անձանց և դատապարտյալներին հիմնարկ ընդունելուց անմիջապես հետո տեղեկացվում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին, որի վերաբերյալ կազմվում է տեղեկանք և կցվում նրանց անձնական գործին:

- Հնարավորության դեպքում բնակելի գոտու երկրորդ հարկում գտնվող չօգտագործվող տարածքը կարելի է վերափոխել և օգտագործել որպես մարզահրապարակ:

Առաջարկությունների վերաբերյալ

- Անհրաժեշտ ջերմաստիճան ապահովելու անհրաժեշտության դեպքում ջեռուցման համակարգը կմիացվի:

- Պատժախցերը չօգտագործելն առայժմ հնարավոր չէ:

**ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄՆՆԴԻ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

• Համապատասխան բյուջետային միջոցները անմիջապես հիմնարկներին հատկացնելով՝ հնարավոր կլինե՞ր արդյունավետ վերահսկել և՛ սննդի որակը, և՛ տեսականին:

• Բացառությամբ 1-2 հիմնարկների, սնունդն անբավարար է:

• Խոհանոցներում չկան սառնարաններ:

• Ոչ բոլոր հիմնարկներն են դիետիկ սննդով ապահովում այն ազատազրկվածներին, ովքեր ունեն դրա կարիքը:

• Սննդամթերքի ձեռք բերումը իրականացվում է «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սննդամթերք ձեռք բերելու համար տարվա ընթացքում իրականացվում է գնման մրցույթ և կնքվում է մատակարարման պայմանագիր, հնարավոր չէ նաև նախօրոք ստույգ ճշտել, թե տարվա ընթացքում ինչ թվաքանակ կունենա տվյալ հիմնարկը: Այդ իսկ պատճառով սննդամթերքը ձեռք է բերվում կենտրոնացված կարգով, բաշխումը կատարվում է ամսական՝ խուսափելով լրացուցիչ կուտակումներից:

• Բոլոր քրեակատարողական հիմնարկներում սննդի բաշխումը կատարվում է ելնելով դատապարտված և կալանավորված անձանց քանակից և ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի N 413-Ն որոշման հիման վրա:

• Քրեակատարողական վարչության կողմից բոլոր քրեակատարողական հիմնարկների բուժ.աշխատողներին տրված է ցուցում կատարելու ամենօրյա պատրաստման ճաշերի համտես, վերցնելով նմուշ և պահպանելով 24 ժամ, ինչը մշտապես վերահսկվում է ԶԿ վարչության կողմից:

• Ոչ լիարժեք ֆինանսավորման պատճառով խոհանոցային սարքավորումների նորացումը կատարվում է մաս-մաս:

• Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի N 413-Ն որոշման հավելված 1-ի հիման վրա հիվանդ դատապարտված և կալանավորված անձանց տրվում են հավելյալ սննդի չափաբաժիններ: Դիետիկ սննդի կազմակերպումն իրականացվում

<ul style="list-style-type: none"> • «Գորիս» և «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկներից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ազատագրվածներին զրկում են ճաշից որպես տույժի միջոց: • «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում ցածր է հացի որակը: 	<p>է սննդի նշված չափաբաժինների (այդ թվում՝ հավելյալ սննդի) սահմաններում, որի արդյունավետության բարձրացման նպատակով տրվել են համապատասխան ցուցումներ:</p> <ul style="list-style-type: none"> • Ինչ վերաբերվում է «Գորիս» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում որպես (պատիժ) տույժ՝ սննդից զրկելու դեպքերին, քրեակատարողական ծառայությունում նման փաստեր չեն արձանագրվել և այն իրականությանը չի համապատասխանում: • Քրեակատարողական վարչությունը ձեռնարկում է շարունակական միջոցներ դատապարտված և կալանավորված անձանց հատկացվող հացի որակի բարձրացման ուղղությամբ:
---	---

<p>ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄՊԱՍԱՐԿՍԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
---	---

<ul style="list-style-type: none"> • Հիմնարկները համալրված չեն անհրաժեշտ մասնագետներով, սարքավորումներով և դեղորայքով: • Բացի «Նուբարաշեն» հիմնարկից, մնացած հիմնարկներում չկան աշխատանքային վիճակում գտնվող ֆլյուորոգրաֆիայի սարքավորումներ: 	<ul style="list-style-type: none"> • Քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ բժշկական մասնագետներով համալրման գործընթացը շարունակվում է: Անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով տրված է համապատասխան հայտ: Ներկայումս դեղորայքի տեսականին և քանակը բավարար է: • Բացի տուբերկուլյոզի հայտնաբերման ֆլյուորոգրաֆիական մեթոդից, Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրով, որի մասն է կազմում քրեակատարողական ծառայության հատվածը, իրականացվում են խորխի հետազոտություններ, որոնք
---	--

<ul style="list-style-type: none"> • Առավել մեծ է հոգեբույժի կարիքը «Գորիս» ՔԿ հիմնարկում, ուր դատապարտյալները պահվում են բանտային ռեժիմում: • Ատամնաբուժական սարքավորումները հնամաշ են, և գործնականում հնարավոր չէ բուժում իրականացնել: • Դեղորայքի մատակարարումը բացարձակապես իրեն չի արդարացնում: Անհրաժեշտ է գումար տրամադրել հիմնարկներին կամ պետք է լինի դեղատների ցանց, որից հիմնարկները կկարողանան անկանխիկ գնումներ կատարել: • Արդյունավետ չի գործում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջը, որը կապված է բյուրոկրատական քաշքշուկների հետ: • Բժշկական քննությունը անցկացվում է ոչ բժշկական անձնակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ: • Շատ դեպքերում ազատագրվածները տեղեկացված չեն, որ ՔԿ հիմնարկ մուտք գործելուն պես պետք է ենթարկվեն բուժզննության: 	<p>միջազգային չափանիշներով ընդունված և արդյունավետ միջոց են հանդիսանում (DOTS ծրագիր) տվյալ հարցում:</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացվում են աշխատանքներ հոգեբույժ մասնագետներին ՔԿ ծառայությունում ներգրավելու ուղղությամբ՝ անկախ հիմնարկի տեսակից: • 2006-ի սարքավորումների ձեռքբերման հայտով նախատեսված են 2 ստոմատոլոգիական սարքավորումներ իրենց գործիքներով: • «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն դեղորայքի ձեռքբերման պարբերականությունը իրականացվում է մրցույթի պայմանագրի հիման վրա: ՔԿ հիմնարկների բժշկական ստորաբաժանումների դեղորայքի բաշխումն իրականացվում է քրեակատարողական ծառայության դեղերի և բժշկական պարագաների բաշխիչ կենտրոնի միջոցով, որը գործում է «Դատապարտյալների հիվանդանոց» հիմնարկում: • Անհրաժեշտության դեպքում կալանավորված անձինք և դատապարտյալները պետ.պատվերի շրջանակներում ստանում են անվճար բուժօգնություն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից: • Յուրաքանչյուր վնասվածք նկարագրվում է բուժանձնակազմի ներկայացուցչի կողմից: • Քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես բոլոր կալանավորված անձինք և դատապարտյալները ենթարկվում են բժշկական զննության, միաժամանակ տեղեկացվելով այդ մասին:
---	--

• Առողջապահության նախարարության ավելի շատ ներգրավումն այս ոլորտում շատ օգտակար կլինի:

Առաջարկություններ

• Հիմնարկները համալրել անհրաժեշտ բուժսարքավորումներով, հատկապես ֆլյուորոգրաֆիկ և ատամնաբուժական սարքերով:

• Գեղորայքի համար նախատեսված գումարը տրամադրել ուղղակի հիմնարկներին:

• Կանոնակարգել և պարզեցնել անհրաժեշտության դեպքում հիվանդ կալանավորներին քաղաքացիական բուժհաստատություն տեղավորելու հարցը:

• Առողջապահության նախարարության շատ առաջատար մասնագետներ արդեն իսկ ներգրաված են քրեակատարողական ծառայության բժշկական ոլորտում: Հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժ-սանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ:

Առաջարկությունների վերաբերյալ.

• Ֆինանսական միջոցների առկայությանը համապատասխան ԲԿՀ-ները աստիճանաբար համալրվում են անհրաժեշտ բուժսարքավորումներով: Միջոցներ են ձեռնարկվում նաև արտաբյուջետային միջոցների ներգրավմամբ դրանց իրականացման համար:

• «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն դեղորայքի ձեռքբերման պարբերականությունը իրականացվում է մրցույթի պայմանագրի հիման վրա:

• Հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ: Բացի այդ, ՀՀ Առողջապահության նախարարության

<ul style="list-style-type: none"> • Քաղաքացիական բուժհաստատությունների հետ պայմանագրեր կնքել անհրաժեշտության դեպքում բժիշկ-մասնագետների այցելություններ հիմնարկներ կազմակերպելու նպատակով: • Համակարգում բուժապասարկումն արդյունավետ դարձնելու նպատակով ՔԿ ծառայության բուժօժանդությունը փոխանցել Առողջապահության նախարարության ենթակայության: • Պետք է գրանցվեն բժշկական քննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունները: • ՔԿ-ներում բժշկական քննություններն իրականացվեն օրինական հարկադրանքի իրավունքով օժտված պաշտոնյաների և այլ՝ ոչ բժշկական անձնակազմի լսողության և տեսողության սահմաններից դուրս: • Ապահովել բուժօգնության դիմողների գաղտնիությունը: 	<p>շատ առաջատար մասնագետներ ներգրաված են քրեակատարողական ծառայության բժշկական ոլորտում:</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունելի չէ: Տեղափոխման դեպքում կվատթարացվի քրեակատարողական ծառայող հանդիսացող բուժաշխատողի իրավական կարգավիճակը և կնվազեն սոցիալական երաշխիքները: • Առողջական վիճակի նկարագրությունը և օբյեկտիվ բժշկական արդյունքների պատկերը ենթակա են պարտադիր գրանցման բժշկական քարտում և համապատասխան մատյանում: • Ընդունելի է, ՔԿ վարչության կողմից հիմնարկների բուժանձնակազմին տրվել է համապատասխան ցուցում: • Ընդունելի է, այդ հարցի լուծման նպատակով մշակվում են համապատասխան մեխանիզմներ:
<p align="center">ԽՍՔԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p align="center">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<ul style="list-style-type: none"> • Հոգեբանական ծառայությունը հեռու է բավարար լինելուց: 	<ul style="list-style-type: none"> • Հոգեբանական աշխատանքներն իրականացվում են առկա

Առաջարկություններ

- Հատուկ ուշադրություն դարձնել ՔԿՀ-ների աշխատակիցների հոգեբանական խնդիրների վրա: Բացահայտել և շտկել այն հոգեբանական փոփոխությունները, որոնք առաջանում են մարդկանց մեջ՝ ազատագրվելու պահից:

- Կազմակերպել որակավորման բարձրացման և ուսուցման դիֆերենցիալ զբաղմունքներ:

- Մշակել տարբեր հոգեբանական ուղղվածություն ունեցող գործնական ձեռնարկներ ՔԿՀ աշխատակիցների համար:

հաստիքային պայմաններին համապատասխան:

Առաջարկությունների վերաբերյալ

- Աշխատակիցների հետ հոգեբանական աշխատանքների իրականացման հարցը օրենսդրությամբ նախատեսված չէ, իսկ նման գործունեության համար անհրաժեշտ է հոգեբան մասնագետների հաստիքների ավելացում:

- Գեռես 2003-ից տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ քրեակատարողական ծառայության սոցիալական աշխատող և հոգեբան մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: 2005-ին կազմակերպվել են հոգեբան մասնագետների նեղ մասնագիտական ուսուցում: Ներկայումս ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվում են քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցում են նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների ծառայողները (այդ հարցը կանոնակարգված է օրենսդրությամբ. ՀՀ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 19 և 20 հոդվածների համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Քրեակատարողական ծառայողների վերապատրաստման անցկացման կարգը»):

- 2005-ին «Բաց հասարակության ինստիտուտ, Հայաստան» հիմնադրամի օժանդակությամբ տպագրվել է «Վերականգնողական ծրագրերի իրականացումը ՀՀ Արդարադատության նախա-

<ul style="list-style-type: none"> • Ուսումնասիրել և բարելավել միջանձնային և սոցիալ-հոգեբանական մթնոլորտը ԶԿՀ-ներում: • Ստեղծել այնպիսի հոգեբանական վիճակ, որը կնպաստի ազատագրվածների դարձի բերմանը և հասարակության լիարժեք անդամ դառնալուն: • Հատուկ ուշադրություն դարձնել և միջոցներ ձեռնարկել կալանավորվածների զբաղվածության խնդիրը լուծելու համար: 	<p>րարության քրեակատարողական հիմնարկներում» ուսումնա-մեթոդական ձեռնարկը: Նոր ձեռնարկ տպագրելու համար ակնկալվում է նաև հասարակական դիտորդների խմբի անդամ հասարակական կազմակերպությունների աջակցությունը՝ դրամաշնորհային ծրագրերում այն նախատեսելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • ԶԿ հիմնարկներում կատարվում են տարբեր հոգեբանական ուսումնասիրություններ: Նպատակային կլինեն դիտորդական խմբի կողմից դատապարտյալների շրջանում իրենց կողմից կատարված որևէ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ուսումնասիրությունների ներկայացումը, որը կփաստեր սույն կետի արդիականությունը: • Անհասկանալի է՝ ինչ հոգեվիճակի մասին է խոսքը: Այնուամենայնիվ, ՀՀ Արդարադատության նախարարությունը պատրաստ է քննարկել համապատասխան կառուցողական առաջարկություն՝ կապված հոգեբանական դրական զարգացման հետ: • Ձեռնարկվում են համապատասխան շարունակական միջոցառումներ:
ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԱՇ- ԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
<ul style="list-style-type: none"> • ԶԿ հիմնարկների վարչակազմի կողմից որպես կանոն հատկացվում է ամսվա ընթացքում 2 տեսակցություն, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ հիմնարկներում տեսակցությունների սենյակների 	<p>Տեսակցություններ</p> <ul style="list-style-type: none"> • Որպես կանոն տեսակցությունների տրամադրման հաճախականությունը այնպես է ընտրվում, որպեսզի յուրաքանչյուր կալանավորված անձի ամսվա ընթացքում 2 անգամից պակաս չտրվի:

քանակը չի բավարարում, որպեսզի յուրաքանչյուր դատապարտյալի տեսակցություններ տրամադրվեն 3 և ավելի անգամ:

- Կալանավորված անձինք չեն տեղեկացվում իրենց իրավունքներին:

- Սահմանափակվում է կալանավորված անձանց 3 ժամյա տեսակցության իրավունքը

- ՔԿՀ-ներում տեսակցության համար նախատեսված սենյակների քանակը և պայմանները տարբեր են: Չկա որևէ չափանիշ, որի համաձայն հնարավոր լինի կանոնակարգել տեսակցության սենյակների թիվն ըստ կալանավորվածների թվի:

- Հաճախակի են դեպքերը, երբ կալանավորներին չի թույլատրվում

Չնայած դրան, ոչ բոլոր հիմնարկներում է այդ սահմանափակումը կիրառվում: Հարցն ամբողջությամբ կկարգավորվի ՔԿ հիմնարկներում թափուր հաստիքների համալրման դեպքում:

- Ընդունելի չէ: Յուրաքանչյուր կալանավորված անձ հիմնարկ ընդունվելուց հետո մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում, որտեղ նա տեղեկացվում է իր իրավունքներին և պարտականություններին, այդ մասին կազմվում է տեղեկանք և կցվում նրա անձնական գործին: Բացի այդ, նրանք ամեն օր հնարավորություն ունեն մանրամասն ծանոթանալ իրենց իրավունքներին (բոլոր խցերում փակցված են կալանավորված անձանց իրավունքների և պարտականությունների մասին թերթիկներ): Կալանավորված անձանց, ինչպես նաև նրանց հարազատներին պարբերաբար տրամադրվում է «Զաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից հրատարակված «Կալանավորված անձանց իրավունքները Հայաստանում» գրքույկը:

- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի համաձայն տեսակցության 3 ժամը դա տեսակցության առավելագույն տևողությունն է և այն կարող է նաև դրանից պակաս լինել:

- Հիմնարկների տեսակցության սենյակների քանակի և դրանց պայմանների վերաբերյալ խմբի կողմից ներկայացված դիտողություններն ընդունելի են, դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

- Կալանավորվածներին լրագրողների հետ տեսակցություն

տեսակցություն ունենալ լրագրողների հետ:

- Նամակագրության իրավունքից օգտվող կալանավորվածները բաց վիճակում են նամակները հանձնում հիմնարկի վարչակազմին:

- Նամակագրության գրաքննության իրականացման հարցերում իրավական կարգավորման անհրաժեշտություն կա:

- Անհրաժեշտություն կա ամրագրել հեռախոսակապից օգտվելու իրավունքի նվազագույն հանախականությունը

- Կալանավորները օգտվում են հեռախոսակապից ըստ հիմնարկի վարչակազմի կազմած ժամանակացույցի:

- Մոցիալապես անապահով կալանավորված անձանց պետության հաշվին տրամադրվի հեռախոսակապից օգտվելու հնարավորություն:

չբույլատրելու փաստեր չեն արձանագրվել:

Նամակագրություն

- Դա կալանավորվածի ցանկությունն է և նա իրավունք ունի նաև փակ վիճակում նամակը հանձնել:

- Այդ հարցերը կարգավորված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ու «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47–րդ հոդվածներով, իսկ դրանից զատ՝ անպատակահարմար է:

Հեռախոսակապ

- Կալանավորված անձանց և դատապարտյալների հեռախոսակապից օգտվելու կարգը և քանակը սահմանվելու է Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

- Ներկայումս ոչ բոլոր հիմնարկներում են կալանավորված անձինք հեռախոսակապից օգտվում հիմնարկի վարչակազմի կողմից կազմված ժամանակացույցերի համաձայն (ՀՀ Արդարադատության նախարարի 09.09.2004թ-ի թիվ 141-Ն հրամանի համաձայն հեռախոսակապի տրամադրման ժամանակացույց կազմվում է անհրաժեշտության դեպքում):

- Ընդունելի է, սակայն դա առայժմ օրենսդրությամբ նախատեսված չէ:

<ul style="list-style-type: none"> • Հանձնույթների ընդունման կետերը չեն ջեռուցվում: • Քրեակատարողական հիմնարկների գրադարանների գրքերը հնացած են և պահվում են ոչ համապատասխան պայմաններում: <p>Առաջարկություններ</p> <ul style="list-style-type: none"> • Նախատեսել տեսակցությունների համար բավարար քանակի սենյակներ, հարմարավետ կահավորել, ջեռուցել սենյակները, նախատեսել մատչելի և բարվոք սանհանգույցներ: • Բոլոր հիմնարկներում հատկացնել և կահավորել երեխաների հետ տեսակցության սենյակներ: • «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում տեղադրել հեռախոսային ավտոմատ: • Անհրաժեշտ է մեխանիզմ մշակել, որպեսզի նամակները վարչակազմին փոխանցվեն փակ վիճակում: • Մշակել գրաքննության մեխանիզմ, որով նամակի հեղինակը ծանոթանա գրաքննության արդյունքների հետ: • Նախատեսել միջոցներ գրադարանները նոր գրքերով համալրելու համար: • Կանոնակարգել զբոսանքի տրամադրման գործընթացը: 	<p>Հանձնույթներ</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունելի է: Միջոցներ են ձեռնարկվում այդ հարցը լուծելու ուղղությամբ: <p>Գրադարաններ</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունելի է: Այդ հարցում ակնկալվում է նաև հասարակական կազմակերպությունների գործունե աջակցությունը: <p>Առաջարկությունների վերաբերյալ</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունելի է: Քրեակատարողական վարչության կողմից միջոցներ են ձեռնարկվում այդ հարցերը լուծելու ուղղությամբ: • Ընդունելի է: Քրեակատարողական վարչության կողմից միջոցներ են ձեռնարկվում այդ հարցերը լուծելու ուղղությամբ: • Ընդունելի է: Քրեակատարողական վարչության կողմից միջոցներ են ձեռնարկվում այդ հարցերը լուծելու ուղղությամբ: • Եթե կալանավորված անձը փակ վիճակում նամակը փոխանցի, փակ վիճակում էլ կուղարկվի հասցեատիրոջը: • Կանոնակարգված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: • մեկնաբանությունները ներկայացված են «Գրադարաններ» հատվածում: <p>Զբոսանք</p> <p>Ընդունելի է: Նախատեսվում է դրանց կանոնակարգում կալանավորվածներին պահելու վայրերի և ուղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:</p>
---	---

<p style="text-align: center;">ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱԺԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>	<p style="text-align: center;">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<p style="text-align: center;">Առաջարկություններ</p> <ul style="list-style-type: none"> • «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում հստակեցնել ուժի կիրառման համաչափության սահմանումները և հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը, դեպքերը և ձևերը: • Ծառայողական քննությունը պետք է ոչ ձևական բնույթ կրի: • Դատախազական վերահսկողությունը արդյունավետ դարձնել: 	<ul style="list-style-type: none"> • Դիտորդական խմբի կողմից նշված «խոշտանգումների փաստերի» վերաբերյալ ՀՀ ԱՆ ՔԿ վարչությունը ժամանակին իր մեկնաբանությունները ներկայացրել է: Բոլոր դեպքերով նշանակվել են համապատասխան ծառայողական քննություններ, որոնք իրականացվել են օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: <p style="text-align: center;">Առաջարկությունների վերաբերյալ</p> <ul style="list-style-type: none"> • Քրեակատարողական ծառայողների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելու կարգը և դեպքերը հստակ և համաչափությամբ սահմանված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով (հոդվածներ՝ 47-51): • Դիտողությունը հիմնավոր չէ: Բացի այդ, հարցը կկարգավորվի ծառայողական քննության անցկացման կարգով: • Քրեակատարողական հիմնարկների նկատմամբ դատախազական վերահսկողությունը իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումը, ոչ թե Արդարադատության նախարարության որևիցե մարմին, այդ թվում նաև ՔԿ վարչությունը: <p style="text-align: center;">Առաջարկությունների մյուս կետերի վերաբերյալ մեկնաբանությունները նշված են համապատասխան բաժիններում:</p>